Ազգ

AZG
armenian newspaper

Ապրիլ 1
1992
Հորեքշաբթի

եռօրեայ թերթ
Բ տարի, թիւ 24 (116)
գինը 95 կ.

Երեւան 375010
Հանրապետութեան 47

դասիչ 69149

հեռ. 581841, Ֆաքս 562941, թելեքս 243266 SULA SU

Ամերիկահայ ղեկավարները Սոչիսակ տան մեջ

Մարտի 26-ին ամերիկահայ ղեկավարներ, որոնց թվում՝ ՌԱԿ-ի, ՀՅԴ-ի, ՀԲԸՄ-ի, Հայկական համագումարի եւ Հայ եկեղեցու ներկայացուցիչները, հրավիրվել են Սոչիսակ տուն, որտեղ լսել են նախագահ Բուշի օգնականների հասուկ զեկուցումը Հայաստանի եւ Արցախի մասին:

Զեկուցողները վստահեցրել են, թե Մ. Նահանգները շարունակելու են Հայաստանին ընծայվելիք մարդասիրական օգնությունը, որը նախկին խորհրդային հանրապետություններին տրամադրված ընդհանուր օժանդակության 1/8-րդ մասն է կազմելու:

Սոչիսակ տունը՝ հետեւել է, թե Ամերիկան որոշել է դրական դեր կատարել Արցախի տագնապի լուծման գործում եւ թե նրան հաջողվել է արգելել Թուրքիայի չմիջամտությունը առ այդ: Ներկայացուցիչների հարցմանը պատասխանելով, զեկուցողները վստահեցրել են, որ Թուրքիան զինվորական օժանդակություն չի ընծայի Ադրբեջանին եւ ոչ էլ ռազմական գործողություններ կծավալի Հայաստանի դեմ: ■

Մահմուդ Վայեզին հանդիպեց Վազգեն Ա-ի հետ

Այսօր քառակողմ հանդիպում Իջեւանում

Մարտի 30-ին, երեկոյան ժամը 21:30-ին Բաքվից կրկին Երեւան ժամանեց Իրանի արտգործնախարարի տեղակալ Մահմուդ Վայեզին, որը հենց օդանավակայանում լրագրողներին հայտնեց, թե այս անգամ նախորդ շաբաթ սկսված բանակցությունները, կշարունակվեն սահմանամերձ գոտում եւ կլինեն *«ավելի հագեցած»*: Ըստ նախարարի, այն տեղի կունենա մարտի 31-ի երեկոյան կամ ապրիլի 1-ի առավոտյան: *«Մեր նպատակն է համաձայնեցնել երկու կողմերի տեսակետները»*, ասաց նա: Երեկ կեսօրին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն ընդունեց Մահմուդ Վայեզիին եւ նրա խմբին: Տեղի ունեցած ջերմ զրույցի ընթացքում Վազգեն Ա-ն դրականորեն գնահատեց Իրանի միջնորդական ջանքերը Լեռնային Ղարաբաղում կրակի դադարեցման ուղղությամբ: Նա նշեց, թե որոշ ուժեր ցանկանում են ղարաբաղյան հակամարտությունը ներկայացնել որպես կրոնական պատերազմ հայերի եւ ադրբեջանցիների միջեւ, սակայն դա այդպես չէ: Մ. Վայեզին իր պատասխան խոսքում ներկայացրեց իրանական կողմի գործողությունները կրակի դադարեցման ուղղությամբ: Զրույցի վերջում իրանցի հյուրերը շնորհակալություն հայտնեցին Ամենայն Հայոց կաթողիկոսին եւ հույս հայտնեցին, որ իրենց միջնորդական առաքելությունը կտա ցանկալի արդյունք:

Երեկ իրանական պատվիրակությունը Վայեզիի գլխավորությամբ ունեցավ նաեւ պաշտոնական հանդիպումներ, այդ թվում Հայաստանի Հանրապետության նախագահի ազգային անվտանգության գծով խորհրդական Աշոտ Մանուչարյանի հետ: Մեր ստացած տեղեկությունների համաձայն, հնարավոր է, որ այսօր Իրանի միջնորդությամբ տեղի ունենա Հայաստանի եւ Ադրբեջանի ներկայացուցիչների հանդիպում սահմանամերձ գոտում: Սակայն հանդիպման տեղի եւ մասնակիցների կազմի մասին լրատվական գործակալությունները հաղորդում են իրարամերժ տեղեկություններ:

Ըստ «Ինտերֆաքս»-ի, երեկ Ռուսաստանի արտգործնախարարի խորհրդական Գալինա Սիդորովան հայտարարել է, թե Ղազախում կայանալիք խորհրդակցությանը մասնակցելու նպատակով շրջան է մեկնել Ռուսաստանի արտգործնախարարի ներկայացուցիչ Վլադիմիր Զեմսկին: Ադրբեջանի եւ Հայաստանի արտգործնախարարությունների մամուլի կենտրոններից ճշտեցին, թե խորհրդակցությունը տեղի կունենա Իջեւանից 18 կմ հեռու Կարմիրավան գյուղի հյուրատանը: Հայկական կողմից կմասնակցեն Հայաստանի նախագահի խորհրդականներ Աշոտ Մանուչարյանն ու Վահան Փափազյանը, ինչպես նաեւ Գերագույն խորհրդի Արցախի հանձնաժողովի նախագահ Սեյրան Բաղդասարյանն ու Գերագույն խորհրդի նախագահության անդամ Խոսրով Հարությունյանը: «Սնարք» գործակալության համաձայն, դեռեւս հայտնի չէ, թե հանդիպմանը կմասնակցե՞ն Ղարաբաղի ներկայացուցիչները: Համենայն դեպս, երեկ Երեւան է ժամանել նաեւ Լեռնային Ղարաբաղի խորհրդարանի նախագահ Արթուր Մկրտչյանը:

Ադրբեջանական կողմից ենթադրվում է Ադրբեջանի նախագահի ազգամիջյան հարցերով խորհրդական Ռասիմ Մուսաբեկովի, ազգային խորհրդի անդամ Նաջաֆա Նաջաֆովայի, ներքին գործերի նախարար Թահիր Ալիեւի, պաշտպանության նախարար Ռահիմ Կազիեւի եւ Ադրբեջանի երկաթգծերի վարչության պետ Էլբրուս Արդալաեւի մասնակցությունը: Հանդիպման ընթացքում նախատեսվում է քննարկել զինադադարի երկարաձգման եւ երկու հանրապետությունների ղեկավարների առաջիկա հանդիպման օրակարգի մասին հարցերը:

Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ Բաբկեն Արարքցյանը բարձր գնահատեց Իրանի միջնորդությունը հայ-ադրբեջանական կոնֆլիկտի կարգավորման գործում: Նա բերահավատորեն է վերաբերվում ԱՊՀ-ի խաղաղարար ուժերի հնարավորություններին Լեռնային Ղարաբաղում, հայտարարելով, թե Հանրակցության շրջանակներում արդեն անհնար է ձեռք բերել *«որեւէ ընդունելի որոշում Ղարաբաղի վերաբերյալ: Այդ հարցը պետք է լուծվի միայն միջազգային մակարդակով»*: ■

ԵԱՀԽ որոշմամբ Չեխո-Սլովակիայի արտգործնախարարը ժամանեց շրջան

Երեկ Բաքու է ժամանել Չեխո-Սլովակիայի արտգործնախարար Իրժի Դիենսբիրը հայ-ադրբեջանական կոնֆլիկտի գոտում ստեղծված իրավիճակին ծանոթանալու նպատակով: Նույն օրը նա հանդիպումներ է ունեցել Ադրբեջանի նախագահի պաշտոնակատար Յաղուբ Մամեդովի, վարչապետ Հասան Հասանովի, արտգործնախարար Հուսեյն Աղա-Սաղրկովի եւ այլոց հետ: Հանդիպման ժամանակ Յաղուբ Մամեդովը նշել է, որ Ղարաբաղի հայկական համայնքի ներկայացուցիչները պետք է մասնակցեն Մինսկի համաժողովին Ադրբեջանի պատվիրակության կազմի մեջ: Ի. Դիենսբիրը հավաստիացրել է, որ այդ տեսակետը հայտնի կդառնա հայկական կողմին: Ադրբեջանի ղեկավարը նշել է նաեւ, որ կոնֆլիկտի գոտում ԵԱՀԽ-ի դիտորդների տեղակայման հարցը պետք է լուծվի միայն ադրբեջանցի փախստականների Լեռնային Ղարաբաղ վերադառնալուց հետո:

Բաքվից հետո Ի. Դիենսբիրը մտադիր է այցելել Լեռնային Ղարաբաղ եւ Հայաստան: Չեխո-Սլովակիայի արտգործնախարարը Անդրկովկաս է ժամանել ԵԱՀԽ-ի անդամ երկրների արտգործնախարարների վերջերս Հելսինկիում կայացած խորհրդակցության որոշման համաձայն: Կոնֆլիկտի գոտի Ի. Դիենսբիրի այցելությունից հետո Մինսկում տեղի կունենա միջազգային համաժողով Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ, որին կմասնակցեն Ադրբեջանի, Հայաստանի, Բելոսի, Իտալիայի, Գերմանիայի, ԱՄՆ-ի, Թուրքիայի, Ֆրանսիայի, Չեխո-Սլովակիայի, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչները: ■

Դաշնակցային պայմանագիրն ստորագրվեց

Երեկ՝ Մոսկվայում կնքվեց դաշնակցային պայմանագիրը: Այն ստորագրեցին Ռուսաստանյան Ֆեդերացիայի 88 սուբյեկտներից 86-ը: Նախկին 18 ինքնավար հանրապետություններից իրենց ստորագրությունը չդրեցին միայն Թաթարստանի եւ Չեչնիայի ներկայացուցիչները: Ինչ վերաբերում է Բաշկորտոստանի մասնակցությանը պայմանագրին, ապա այն պայմանավորված էր նախօրեին Ռուսաստանի հետ կնքված հատուկ համաձայնագրով, որը թույլ է տալիս Ուֆայի սեփական քաղաքականություն վարել դաշնակցային պայմանագրի 5 կետերի վերաբերյալ: Դրանք են՝ սեփականության խնդիրները, ընդերքը, արտաքին տնտեսական գործունեությունը, հարկային քաղաքականության եւ հարկադրման ոլորտները:

Արարողությունից հետո Ռուսաստանի Գերագույն խորհրդի նախագահ Ռուսլան Խասբուլատովը նշեց, թե պետք չէ ողբերգականորեն ընդունել այն փաստը, որ Թաթարստանը չի ստորագրել դաշնակցային պայմանագիրը: *«Անհրաժեշտ է բանակցել եւ ձեռք բերել միասնական կարծիք»*, ասաց նա: Չեչնիայի վերաբերյալ, Խասբուլատովն ասաց, *«Զոխար Դուդաեւը օրինական ղեկավար չէ եւ նրա ստորագրությունը մեզ պետք չէ: Մենք համոզված ենք, որ ի վերջո ամեն ինչ կկարգավորվի»*: ■

Քրդական լայնածիր ընդոստություն Թուրքիայում

Թուրք-գերմանական հարաբերությունները խիստ լարված

«Եթե նույնիսկ 100 հազար քուրդ սպանվի, հոգս չէ». «Միլլիյեթ» թերթին տված հարցազրույցում ասել է քրդական ապստամբական շարժման ղեկավար Աբդուլլահ Օջալանը. Լիբանանի Բեքաայի հովտում, որտեղ գտնվում է նրա զինյալների մարզման գլխավոր կենտրոնը: *Մենք սրան պատրաստվում էինք 20 տարուց ի վեր: Շատ արյուն է թափվելու»*:

Եւ արյունը թափվում է, հետզհետե ավելի շատ: Միջազգային դիտորդներն պնդում են, որ Իրաքի եւ Սիրիայի հետ թուրքական սահմանագլխին վերջին մի քանի շաբաթների ընդհարումներն առաջիկա օրերին կվերածվեն քրդական համատարած ապստամբության, ամբողջ Թուրքիայի տարածքում:

Թուրքական զորքը, ընդհարումների դաշտ նետելով իր ընտիր զորաբանակները, ամենայն անգթությամբ շարունակում է ճնշել ապստամբներին, օգտագործելով իր զինանոցի լավագույն զենքերը, որոնց թվում գերմանական «Լեոպարդ» տիպի հրասայլեր:

Վերջին օրերի ամենակատաղի բախումները տեղի ունեցան Սըոնուրֆ գյուղում, սիրիական սահմանի մոտ, որտեղ սպանվածների թիվն արդեն հասել է հարյուրների, փոդոցներն ամբողջ շարով հրդեհված են, մինչ զինվորական հրկիզված ռազմակառքերը մնում են 25 հազարանոց գյուղի տարբեր մասերում:

Մյուս կողմից, գերմանական հրասայլերի օգտագործումը քրդական ապստամբության ճնշման գործում, քաղաքական-քարոզչական հակամարտության առիթ է ստեղծել թուրք-գերմանական հարաբերություններում: Գերմանիան, շաբաթավերջին խիստ քննադատության ենթարկելով թուրքական կողմին քրդերի բնաջնջման գործում, առկախել էր զենքի արտածումը դեպի Թուրքիա՝ վերջինիս մեղադրելով գերմանական «Լեոպարդ» հրասայլերը ներքին հարձակողական կռիվներում օգտագործելու հանցանքով: Իր հերթին, նախագահ Թուրգութ Օզալը երկուշաբթի օրը «հիշեցրել էր» Գերմանիային նացիստական ցեղասպանությունը, ավելացնելով, թե Գերմանիաների վերամիավորումից հետո փոխվել է Բոնnի քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ:

«Լեոպարդ» հրասայլերի օգտագործման պարագան քաղաքական զայրակղության վերածվեց անցնող երկու օրերին, երբ պարզվեց նրանց Թուրքիա առաքման մեջ մի շարք պարտադիր ուղեւորություններ: Իսկ երեկ, տեղի տալով սոցիալ-դեմոկրատական կուսակցության ճնշումներին, կանցլեր Քոլը իր պաշտպանության նախարար Ստոլտենբերգից պահանջեց հրաժարական տալ, ինչը եւ արվեց: ■

Կոզիրեւը կայցելի Անդրկովկաս

Ապրիլի 2-ին, Դաշնակցային Ռուսաստանի արտգործնախարար Անդրեյ Կոզիրեւը կայցելի Վրաստան, Հայաստան եւ Ադրբեջան: Այդ մասին երեկ հայտարարել է նախարարի առաջին տեղակալ Ֆյոդոր Շելով-Կովեդյաեւը: Երեւանում Կոզիրեւը նախատեսում է հանդիպել Չեխիայի եւ Սլովակիայի արտգործնախարար Իրժի Դիենսբիրի հետ եւ քննարկել Լեռնային Ղարաբաղի իրադրությունը: Նույն թեմայով Անդրեյ Կոզիրեւը բանակցություններ կվարի նաեւ Բաքվում: Ըստ Շելով-Կովեդյաեւի, նախարարը նախատեսում է նաեւ այցելություն Լեռնային Ղարաբաղ: ■

Ֆրանսիական սոցիալիստները նոր հարված ստացան

Կիրակի օրը Ֆրանսիայի նահանգային տեղական ընտրություններում Ֆրանսիական սոցիալիստական կուսակցությունը նոր ձախողություն կրեց՝ տեղական 21 խորհուրդներից առնվազն 5-ում կորցնելով իր ունեցած աթոռների մեծամասնությունը: Ընտրության արդյունքները եւ իշխող սոցիալիստական կուսակցության հաջորդական կորուստները դիտորդներին առիթ տվեցին հետեւություններ անելու, թե նախագահ Միտերանն այս շաբաթվա ընթացքում կարող է պաշտոնից հրաժարեցնել Էդիթ Կրեսոնին՝ երկրի առաջին կին վարչապետին: ■

Բուշը 13 միլիարդ է պահանջում ԱՊՀ համար

Նախագահ Բուշը հայտարարեց, թե օրերս Կոնգրեսին է ներկայացնելու նախկին Խ. Միությանն օգնելու մի ծրագիր 13 միլիարդ դոլլար ընդհանուր գումարով, որի 1 միլիարդ դոլլարը որպես նվիրատվություն տրվելու է ռուբլին կայունացնելու նպատակով, իսկ 12 միլիարդը՝ Միջազգային դրամական Ֆոնդի միջոցով ԱՊՀ-ի երկրներում ֆինանսական վերականգնողական աշխատանքները կազմակերպելու՝ նպատակով: Դիտորդների կարծիքով, այս անգամ նախագահին կհաջողվի վավերացնել իր ծրագիրը, մանավանդ որ, այդ փաթեթի որոշ մասեր ամերիկյան օրենսդիր իշխանության հաստատման կարիք չունեն: ■

Լեւիի պաշտոնալիքը ցնցում է իսրայելյան կառավարությանը

Իսրայելի արտգործնախար Լեւին կիրակի օրը պաշտոնաց այս. շաբաթվա ընթացքում հրաժարական ներկայացնել բողոքելու համար երկրի ներսում աշխեցազի (արեւմտաեւրոպական) եւ սեֆարդիմ (արեւելյան) հրեաների միջեւ կիրառվող խտրականության դեմ: Արաբ-իսրայելյան բանակցությունների ջատագով Լեւիի այդ պաշտոնալիքը քաղաքական ցնցում պատճառեց Յիցխակ Շամիրի կառավարությանը: Երկու Շամիրը փորձեց կարգադրել իր կառավարության այդ պատվածը, արտգործնախարարին խոստանալով առաջիկա հունիսի ընտրություններում *Լիկուդ* դաշինքի հաղթանակի դեպքում նրան տալ նաեւ փոխվարչապետի պաշտոնը, արտգործնախարարության կողքին: Լեւիի հրաժարվելու դեպքում իշխող *Լիկուդ* դաշինքի ներսում պատասխանվում են էթնիկական բնույթի մեծ լարվածություններ: ■

«Թուրան»ը հերքում է

Ինչպես հաղորդում է «Թուրան» գործակալությունը, Ադրբեջանի պաշտպանության նախարարության մամուլի կենտրոնը հայտարարություն է արել, որում հերքում է «Ինտերֆաքս»-ի այն լուրը, թե մարտի 30-ին Ադրբեջանի բանակի 1600 զինվորներ մեծ քանակությամբ զրահատեխնիկայի աջակցությամբ հարձակվել են Ստեփանակերտի վրա եւ հետ մղվել՝ մարտի դաշտում թողնելով 600 պատանված:

Մամուլի կենտրոնը այդ լուրը որակել է որպես «կանխամտածված կեղծիք, որը նպատակ ունի նախապատրաստել հասարակական կարծիքը Ղարաբաղում ադրբեջանցիների վերջին ամրոցի Շուշիի գրավմանը»: ■

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

Իսրայելի կառավարությունը քննադատեց Գերմանիայի կանցլեր Քոլին Ավստրիայի նախագահ Կուրտ Վալդհայմի հետ անցյալ շաբաթավերջին ունեցած հանդիպման համար: Հրեաները Վալդհայմին մեղադրում են նացիստական անցյալ ունենալու պնդումով:

Բոսնիա-Հերցեգովինայից բազմաթիվ բնակիչներ հարեւան հանրապետություններ փախան, երբ նշանառու կրակով տեղում 3 հոգի սպանվեցին, հակառակ սերբերի, խորվաթների եւ իսլամների միջեւ անցյալ շաբաթ կայացած հրադադարի համաձայնությանը: Անցյալ շաբաթվա ընթացքում միայն Բոսանսկի Բրոդ քաղաքում եւ շրջակայքում սպանվել է ավելի քան 40 մարդ:

Ֆրանսիական ոստիկանությունը ձերբակալել է իսպանական բասկերի, որոնք բասկ անջատողական շարժման 3 ղեկավարներից են: Շարժման ներկայացուցիչները հայտարարել էին, թե խանգարելու են Սեւիլիայում կայանալիք համաշխարհային ցուցահանդեսին ու ամռանը Բարսելոնում տեղի ունենալիք Օլիմպիական խաղերին: Շարժումը 1992 թ. առաջին երեք ամսում սպանել է 18 իսպանացիների: ■

digitised by A.R.A.R.@

«Հայ եւ արաբ ժողովուրդների բարեկամությունն ունի դարավոր արմատներ»

Այսպես հայտարարեց մարտի 30-ին կայացած մամուլի ասուլիսում Սիրիայի արաբական հանրապետության արտգործնախարար Ֆարուկ ալ-Շարաան: Նշելով Հայաստանի Հանրապետության նախագահի, վարչապետի եւ արտգործնախարարի հետ ունեցած ջերմ հանդիպումների կարեւորությունը, պրն. ալ-Շարաան մեծ նշանակություն տվեց ասուլիսից առաջ ստորագրված փաստաթղթերին, հատկապես Հայաստանի եւ Սիրիայի արտգործնախարարությունների միջեւ խորհրդակցություններ անցկացնելու մասին արձանագրությանը, առեւտրական եւ մշակութային համաձայնագրերին:

«Մենք ունեցել ենք համանման ծրագրեր, ընդհանուր բնամիներ եւ հույս ունենք, որ անկախության ձեռք բերումը կլինի մի նոր հանգրվան Հայաստանի տնտեսական, մշակութային եւ գիտական զարգացման համար», շարունակեց նախարարը: Նա նշեց նաեւ, որ Ղարաբաղյան հիմնահարցի կարգավորումը պետք է ընթանա խաղաղ բանակցությունների ճանապարհով եւ Սիրիան կտրականապես դեմ է որեւէ տեսակի ուժային միջոցների օգտագործմանը: Նախարարն ասաց, թե շատ է ցավում, որ երկու կողմից էլ կան զոհեր, սակայն հույս է հայտնում, որ խաղաղ կարգավորման ողղությամբ տարվող ջանքերը կպսակվեն հաջողությամբ: Իր կողմից Ռաֆֆի Հովհաննիսյանը նշեց, որ երկու երկրների միջեւ ստեղծված բարիդրացիական հարաբերությունները պայմանավորված են Սիրիայի արտգործնախարարի արդարամիտ դիրքորոշմամբ, այն է անկողմնակալորեն աջակցել շրջանում իրադրության կայունացմանը: Ամենակարեւորն այն է, շարունակեց Ռ. Հովհաննիսյանը, որ մեզ մեկ անգամ եւս հավաստիացվեց Սիրիայի եւ արաբական աշխարհի այն համոզմունքը, որ Ղարաբաղյան հարցը որեւէ կրոնական երանգ չունի:

Ադրբեջանի վարչապետ Հասանովը Բաքվում կայացած մամուլի ասուլիսում հայտարարել է, թե «Հայաստանը Կովկասում Իսրայելն է արաբական աշխարհում»: Սիրիայի արտգործնախարարին ուղղված մեր այն հարցին, թե այս դեպքում Լեռնային Ղարաբաղը ավելի շատ չի՞ հիշեցնում Պաղեստինի ճակատագիրը, պրն. Շարաան պատասխանեց. «Ադրբեջանի ղեկավարների հետ բանակցությունների ընթացքում մենք ընդգծեցինք, որ շատ սխալ կլինի որեւէ համեմատություն կատարել Իսրայելի եւ Հայաստանի միջեւ: Իսրայելի գոյությունը այդ շրջանում լիովին տարբերվում է Հայաստանի վիճակից: Մենք նշեցինք նաեւ, որ բոլորովին նմանություններ չկան երկու պետությունների անցյալի եւ պատմության միջեւ: Փաստ է, որ Իսրայելը կառավարում է արաբական մի շարք երկրների տարածքները, գրավել է Գոլանի բարձունքները, Հորդանանի արեւմտյան ափը, Սինան, ինչպես նաեւ Հարավային Լիբանանը: Նա մերժում է ՄԱԿ-ի բոլոր բանաձեւերն ու որոշումները, ըստ որոնց Իսրայելը պետք է ետ քաշվի բոլոր գրավված տարածքներից: Մինչդեռ Հայաստանը շատ հնագույն պատմություն ունեցող մի երկիր է, եւ այդ պատմության ընթացքում եղել է պետություն, իսկ հայերը շրջանի ամենահնագույն ժողովուրդներից մեկը: Ինչպես գիտենք, Հայաստանը երբեւէ ագրեսիա չի կատարել որեւէ երկրի նկատմամբ: Ընդհակառակը, հայ ժողովուրդը դարաշրջանից ենթարկվել է եղեռնի: Ուստի, ինչպես Բաքվում հաստատեցինք, այնպես էլ այստեղ պետք է ընդգծենք, որ այդ խնդրում որեւէ կրոնական բնույթ չկա: Հայաստանն ու Ադրբեջանը հարեւան պետություններ են եւ պետք է շարունակեն շրջանում իրենց խաղաղ գոյակցությանը: Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը պետք է լուծեն խաղաղ բանակցությունների կարգավորմամբ: Հակամարտությունը շարունակելու ամբողջ վնասը կրելու են հայ եւ ադրբեջանցի ժողովուրդները: Իսկ հակամարտությունից կօգտվեն արտաքին ուժերը, եւ ոչ երբեք Հայաստանը կամ Ադրբեջանը: Այս նույն խոսքերը ես հաստատել եմ նաեւ Բաքվի ասուլիսի ժամանակ», ասաց նա:



ՌՈՒԲԻՆՅԱՆ

Իր հերթին արտգործնախարար Ռաֆֆի Հովհաննիսյանն ավելացրեց, թե «Միջին Արեւելքի խաղաղության գործընթացի մեջ անհրաժեշտ է, որ պաղեստինցիները մասնակցեն որոշես կողմ, որոշեսգի թե եւ կամաց-կամաց, բայց ինչ-որ արդյունքի հասնեն: Նույն զուգահեռը կարելի է կատարել նաեւ Լեռնային Ղարաբաղի հարցում: Առանց Լեռնային Ղարաբաղի իշխանությունների ներկայության, բանակցությունների յուրաքանչյուր փորձ կամ միջազգային համաժողով, ձախողման եւ վիժեցման է արժանի: Մենք բազմիցս կատարում ենք հայտարարություններ, հռչակում ենք խաղաղության ծրագրեր ինչ-որ հոնորական կամ հանրային կարծիք ստեղծելու նպատակներով: Եթե Ղարաբաղի հարցը բանակցությունների միջոցով պետք է լուծվի, ապա ինչպես Միջին Արեւելքի գործընթացում, այստեղ եւս շահագրգռված կողմը պետք է ներկայանա: Միջին Արեւելքում աշխարհը հասել է դրան, որ առաջխաղացում կա, բայց մինչեւ այդ նույն տեղը չհասնի նաեւ Լեռնային Ղարաբաղը, ոչ մի տեղաշարժ չի լինի: Իհարկե, կան նմանություններ եւ տարբերություններ: Երկու հիմնական նմանություններից մեկը ինքնորոշման սկզբունքն է, իսկ երկրորդը, սեղանի շուրջ բանակցությունների ժամանակ տվյալ ժողովրդի մասնակցությունը»:

Մեր երկրորդ հարցին, թե ինչպես է Սիրիան վերաբերում Լեռնային Ղարաբաղի որպես առանձին միավորի խաղաղ բանակցություններում մասնակցելու հարցին, պրն. Շարաան պատասխանեց. «Քանի որ մենք նման մանրամասնությունների մեջ չենք մտել եւ Սիրիայի կառավարությունը տվյալ հարցի մասին դիրքորոշում չունի, դեռ ոչինչ չենք կարող ասել: Ադրբեջանական կողմը պնդում է, թե Լեռնային Ղարաբաղը որպես առանձին կողմ չպետք է մասնակցի բանակցություններին, մինչդեռ Հայաստանի դիրքորոշման հիմքում այն, նա որպես առանձին կողմ պետք է մասնակցի: Իմ կարծիքով, երկու պետությունները պետք է հասնեն այն փոխըմբռնմանը, թե բանակցություններն ի՞նչ շրջանակներում պետք է տեղի ունենան եւ ի՞նչ ձեւերով պետք է ընթանան: Այդ մանրամասները, որ իմացանք այս այցի ընթացքում, մեզ կօգնեն Սիրիայում ընդունելու որոշակի դիրքորոշում, որը կնպաստի այս հիմնահարցի խաղաղ կարգավորմանը, եւ ոչ թե սրմանը», եզրափակեց նա:

Նույն օրը Սիրիայի արաբական հանրապետության պատվիրակությունը, որի մեջ էին մտնում նաեւ մի շարք նախարարությունների ու վարչությունների ներկայացուցիչներ, թվով 22 հոգի, մեկնեց Հայաստանից: Ինչպես մեզ տեղեկացրեց Արմենպրեսի տնօրեն Գեւորգ Հովհաննիսյանը, տեղի է ունեցել նաեւ գործնական հանդիպում սիրիական ՍԱՆԱ գործակալության տնօրեն Ֆայեզ Սաեղի հետ, որի ընթացքում ձեռք է բերվել լրատվական համագործակցության մասին նախնական պայմանավորվածություն:

ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆ

Ռսկեայ առիթը, զոր պետք չէ փախցնել

Օրերս Անթիլիասում (Լիբանան) գումարվում է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության պատգամավորական ժողովը, սեփական թե բանագրավյալ թեմերից ներկայացած պատգամավորների եւ եկեղեցական ներկայացուցիչների մասնակցությամբ: Այդ առթիվ հրապարակվել է ՌԱԿ Կենտրոնական վարչության սույն հաղորդագրությունը, որ կոչ է անում 43 տարի հետո ի վերջո արդար ձեւով լուծել մեր Ազգային եկեղեցու երկփեղկման ցավոտ հարցը, ի խնդիր մեր ժողովրդի ու եկեղեցու միասնության:

Օրերս կը գումարուի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թեմերու պատգամաւորական ժողովը:

Յուրս պատերազմի պատճառով անարեւն յետոյ, Անթիլիասի հերձուածին կը ներկայանայ ոսկեայ առիթ մը Հայաստանի եւ մեր ժողովուրդի կեանքին մէջ արձանագրուած նորագոյն զարգացումներու լոյսին տակ վերանայելու իրենց վարած հաղարականութիւնը եւ փակելու այն տխուր էջը, որ Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ պատմութեան մէջ բացած էր Լիբանանի տխրահռչակ նախագահ Շամունի ոստիկանութեան թիւնովի տուած Դաշնակցութիւնը:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան որոշ միաբաններու արտայայտութիւններէն դասելով, Անթիլիաս տրամադիր կը թուի կարգ մը զիջումներ կատարելու էջմիածնի:

Զիջողական նոր հաղարականութեան մը հաւանականութիւնը աւելի կը շեշտուի նաեւ նկատի առնելով Լեւոն Տր Պետրոսեան-Հրայր Մարուխեան «սիրալիր» որակուած հանդիպումը, ուր Հայաստանի նախագահն ու Դաշնակցութեան թիւրոյի հերթապահը կը թուին որոշ հասկացողութեան մը յանգած ըլլալ (թէեւ հայրենի պատասխանատու աղբիւրներ թերահաւատ են հանդիպման դրական արդիւնքներուն նկատմամբ եւ կը նշեն, թէ բան չէ փոխուած Դաշնակցութեան ընթացիկ մտքի):

Տակաւին, զիջողական հաղարականութեան որոշումին համար պարարտ հող կը ներկայացնեն Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա-ի վերջին տարիներուն կատարած միակողմանի զիջումները ի դիմաց Անթիլիասի սնամէջ թուացող խոստումներուն: Զիջումներ, որոնց հետեւանքներէն են էջմիածնայ հեղինակութեան եւ իրաւունքներուն պաշտպանութեան տեսակէտ մը ի վեր արդարացուած ընդհանուր անորոշութիւնը, Դամասկոսի Թեմի կարկտան լուծումը, եւ այլն:

Ամբողջ տասնամեակ մը Անթիլիաս եւ էջմիածին բանակցեցան բանակցութիւնները շարունակելու կարեւորութեան շուրջ:

Ամբողջ տասնամեակ մը Ամենայն Հայոց Հայրապետը լաւատեսական ոգիով յայտարարութիւններ կատարեց, ըսելով թէ հասկացողութեան եզրեր գտնուած են էջմիածնայ եւ Անթիլիասի միջեւ:

Ամբողջ տասնամեակ մը Գարեգին Բ Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, հայկական շուկայի վրայ, յարգանքի խօսք ուղղեց իր աւագ եղբօր Վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ հաղորդական յուզումով արտասանեց էջմիածին ու Հայաստան բառերը:

Բայց նաեւ ամբողջ տասնամեակ մը մենք զարմանքով ականատեսը դարձանք ժողովուրդներու պատմութեան մէջ անանախադէպ բանակցութեան կերպի մը, երբ Անթիլիաս հետեւողականօրէն շարունակեց նոր թեմեր հաստատելու հաղարականութիւնը եւ իբրեւ էջմիածնայ հաւատարազօր Աթոռ ներկայանալու իր վարագիծը համաշխարհային բեմահարթակի վրայ...:

Այդ անցնող տասնամեակի յատկանշական իրադարձութիւններէն եղան երկու կաթողիկոսներու միասնական կոնդակներն ու կոչերը, միասնական այցելութիւնները Նիւ Եորք եւ Բրիւսէլ երկրաշարժի աղէտին դարման գտնելու կամ նոր եկեղեցի օծելու նպատակով, եւ դեռ Ամենայն Հայոց Կաթողիկոսին ծունկ մը աղօթը Անթիլիասաբնակ եկեղեցւոյ մէջ, մինչ Գարեգին Բ Կաթողիկոսի առիթը կը տուէր իր աղօթը բառնալու առ Աստուած էջմիածնայ Մայր Տաճարին մէջ:

Երեւոյթներ որոնք անխառն հաճոյքի չվերածուեցան եւ իբրեւ նուաճում չներկայացան մեզի, քանի որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը գործուած պատմական սխալ մը սրբագրելու անկեղծ ճիգը չընկերացուց անոնց:

Այսօր, ահաւասիկ, կը ներկայանայ պահը փորձաքարի զարնելու Անթիլիասի եւ իր տէրերուն անկեղծութիւնը:

Պահ մը, որ մասնակի զիջումներու կամ կարկտան լուծումներու պահը չէ, քանի որ մեր ժողովուրդը նոր հայրենիք կերտելու իր հրամայականին դիմաց հարկ է որ հեսգիեսէ ծերբազատուի իր միասնութիւնն ու միասնականութիւնը խախտող, զինք պառակտեալ վիճակի մէջ պահող, իր ուշադրութիւնը շեղող եւ իր կարողականութիւնը ջլատող երեւոյթներէ:

Միամիտ չենք խորհելու համար, թէ գրչի մէկ հարուածով եւ ակնթարթային արագութեամբ լուծելի հարց մըն է մեր եկեղեցւոյ մէկութեան եւ միասնութեան վերականգնումը, բայց միամիտ ենք ըսելու եւ ընդգծելու չափ, թէ այսօր պահն է այդ հիմնական լուծումին, որեւէ այլ որ ան իրագործելի ըլլայ հանգրուանային եղանակով:

Իսկ այդ հիմնական լուծման համար նախապայման է որ

Ա. էջմիածնայ Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնն ու Ամենայն Հայոց Կաթողիկոսը նկատուին գերագահ,

Բ. Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին մէկ եւ միակ պատուիրակութեամբ անդամակցի եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին եւ մասնակցութիւն բերէ միջազգային այլեւայլ եկեղեցական կազմակերպութիւններու կամ հաւաքներու,

Գ. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը էջմիածնայ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան վերադարձնէ 1956-ի հերձուածէն ետ գրաւուած թեմերն ու սահմանափակուի Լիբանանի, Սուրիոյ եւ Կիպրոսի թեմերով, այն հասկացողութեամբ, որ Դամասկոս վերադառնայ Անթիլիասի հովանիին,

Դ. Հիւսիսային Ամերիկայի մէջ վերջ տրուի «Անթիլիասական թեմ»-ի գոյութեան:

Այս սկզբունքային եւ հիմնական լուծումներուն յանգելէ ետք, Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը ի հարկին կրնայ գործնական նկատառումներով Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան վսահիլ աշխարհագրական որոշ տարածքի մը մէջ կարգ մը թեմերու փոխադրելու հովանաւորութիւնը, բայց այս եւ նման հարցեր կը մնան հետագային լուծելի:

Մեծի Տանն Կիլիկիոյ թեմերու պատգամաւորներուն ներկայացած է ոսկեայ առիթ մը պատմութեան առջեւ մաքրագործելու ջնջելով սեւ էջը: Լուրջ պատասխանատուութեան մը առջեւ պիտի գտնուին անոնք, եթէ չուզեն կամ չկարենան օգտագործել այս եզակի առիթը:

ՌԱԿ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Արցախյան Օրագիր

Շահումյանը հրետակոծվել է

Երեւանի իրազեկ աղբյուրները հաղորդեցին, որ մարտի 28-ի վաղ առավոտյան Ջեյվա եւ Շեֆեգ գյուղերում տեղակայված «Գրադ» կայանքներից հրետակոծվել է Շահումյանի շրջկենտրոնը: Արձակվել է մոտ 80 արկ: Կան զոհեր եւ վիրավորներ, որոնց թիվը ճշտվում է: Ավերվել եւ վնասվել են բազմաթիվ բնակելի տներ:

Նախօրեին, երեկոյան Շուշիից հրետակոծման են ենթարկվել Ասկերանի շրջանի Շոշ եւ Քոսասի գյուղերը: Կան ավերածություններ եւ վիրավորներ: Երկնաթռիչտեղամասային ուժերը քայլեր են ձեռնարկել ադրբեջանցիների կրակակետերը լռեցնելու նպատակով:

Ճշտված տվյալներով, Ամիրանլարի կողմից Մարտունու շրջկենտրոնի ուժգին հրետակոծման ժամանակ ավերվել է 10 տուն: Կան սպանվածներ եւ վիրավորներ: ■

Պատասխանը չի ուշացել

Ադրբեջանի ներքին գործերի նախարարության տվյալներով, մարտի 28-ի կեսօրին, Շահումյանի շրջանում առանց տարբերակիչ նշանների ուղղաթիռները գնդակոծել են Ջեյվա գյուղը: Հաղորդագրության մեջ նշվում է նաեւ, որ ուղղաթիռները օդ էին բարձրացել հայկական տարածից:

Նույն ժամին զրահամեքենաներից հրետակոծվել է Աղդամի շրջանի Նեյլի գյուղը: Գնդակոծվել են նաեւ Ջանգելանի, Ջեբրաիլի եւ Ֆիզուլու շրջանների բնակավայրերը:

Նույն աղբյուրների համաձայն, մարտի 27-ի երեկոյան Ղազախի շրջանում հայկական կողմը պատանդ է վերցրել 3 ադրբեջանցու: ■

Խայտառակ հարձակում

Երեւանի իրազեկ աղբյուրները հաղորդեցին, որ մարտի 29-ի լույս 30-ի գիշերը մոտ 2 հազար ադրբեջանցիներ 15 զրահամեքենայի աջակցությամբ հարձակում են ձեռնարկել Սեւշանակերտի վրա: Նախնական տվյալներով, հայկական կողմի կորուստներն են 12 սպանված եւ 31 վիրավոր, իսկ ադրբեջանցիները մարտի դաշտում թողել են մոտ 600 սպանված: Ադրբեջանական կողմի զոհերի մեծ քանակը պայմանավորված է նրանով, որ սոնրաթաքնումները վաս են նախապատրաստված եղել եւ գտնվելով տարբեր թեւերում նույնիսկ կրակել են միմյանց վրա:

ԼՂՀ-ի ինքնապաշտպանության ուժերի շտաբը գտնում է, որ 1992թ. ընթացքում սա ադրբեջանական բանակի ամենազանգվածային հարձակումն է:

Հարձակումն ուղեկցվում էր Ստեփանակերտի ուժգին հրթիռակոծմամբ, որը տեղացիների գնահատմամբ, ամենասաստիկն էր հայ-ադրբեջանական կոնֆլիկտի ամբողջ ընթացքում: «Գրադ» կայանքից քաղաքի վրա արձակվել է 180 արկ: Կան զոհեր եւ վիրավորներ:

Նույն օրը, մարտի 29-ին, Մարտակերտի շրջանում խփվել է Մի-24 ռազմական ուղղաթիռը, որը գնդակոծում էր հայկական բնակավայրերը:

Մինչդեռ, ինչպես հաղորդեց Ադրբեջանի ՆԳՆ-ը, լույս 30-ի գիշերը հրետակոծվել են Ջեյվա, Շեֆեգ, Թոդան եւ Նեյլի գյուղերը: Արդյունքում 5 հոգի զոհվել է, 11-ը վիրավորվել: Հրետակոծման են ենթարկվել նաեւ Շուշին եւ Թոուզի շրջանի Մունջաֆլու գյուղը: Հայերը հարձակվել են Մարտակերտի շրջանի Աղդաբան գյուղի վրա: ■

«Հայերը հրկիզում են»

Մարտի լույս 31-ի գիշերը հայկական ուժերը հարձակվել են Ֆիզուլու շրջանի Հողեր գյուղի վրա, գրավել եւ հրկիզել այն: Այդ մասին հաղորդեցին Ադրբեջանի նախագահի պաշտոնական Յաղուբ Մամեդովի մամուլի ծառայությունում: Նախնական տվյալներով, զոհվել է գյուղի 6 բնակիչ, կան վիրավորներ:

Շուշիի եւ Քոսալար գյուղի հրետակոծման արդյունքում զոհվել է 9 մարդ, 4-ը վիրավորվել: Գնդակոծման են ենթարկվել նաեւ Ֆիզուլու շրջկենտրոնը, Աղդամի, Դուբաղլիի, Ջանգելանի, Լաչինի, Ջեբրաիլի եւ Ղազախի շրջանների գյուղերը:

Մինչդեռ, Երեւանի իրազեկ աղբյուրները հաղորդեցին, որ մարտի լույս 31-ի գիշերը եւ առավոտյան հրետակոծվել են Ստեփանակերտը եւ Մարտունին: Կան վիրավորներ: ■

digitised by A.R.A.R.@

«ԱԶԳ» ԵՌՕՐՅԱՅԻ ՄԵԾԱՐԳՈ ԽՄԲԱԳՐԻՆ



Ձեր թերթի թիվ 22 *(1992 թ. մարտի 25)* **համարի 8-րդ էջում** *«ՀՀՇ 4-րդ համագումար. Շարժումը մնացել է օդում կախված»* **հոդվածում հեղինակը փորձել է պատասխանել «Ի՞նչ հարցեր ննջարկվեցին, ի՞նչ հեռեւություններ կարելի է անել» հարցերին: Ընդ որում, մեջբերումներ կատարելիս Վիգեն Խաչատրյանը տուրք է տվել նախկինում ընդունված ձեւին, այն է՝ մարքսիզմի կլասիկներից մեջբերումներ կատարել երբ եւ ինչպես ցանկալի է, միայն թե այդ մեջբերումները հաստատեն հայտնած մտքերը:**

Նույն կերպ նա վարվել է վերոհիշյալ հոդվածում, որտեղ մեջ է բերվել համագումարի իմ ելույթից մի հատված, որը ես չեմ ասել եւ կատարում մի հեռեւություն, որն իմը չէ: Այսպիսով, կեղծ մեջբերումներով հեղինակը փորձել է հիմնավորել իր կասկածելի մտքերը:

Հայտնում եմ Ձեզ, որ՝ ելույթս եղել է գրավոր, այն կիրառարակվի «Հայք» պատասխանաթերթում, բացի այդ, կարող եմ անհրաժեշտության դեպքում Ձեզ տրամադրել թե սեւագիր եւ թե մեքենագիր ամբողջական տարբերակները:

Խնդրում եմ տպագրել այս նամակը:

Հարգանքով՝ ՀՈՒՍԻԿ ԹԵՆ. ԼԱԶԱՐՅԱՆ

Տեր Հուսիկ քահանան պարզաբանումներ է անում. մենք եւս

Հրատարակելով Հայոց Համազգային շարժման նախագահ Տ. Հուսիկ հեն. Լազարյանի այս նամակը, ստիպված ենք ընթերցողներին հիշեցնել նամակում *«կասկածելի մտքեր»* որակավորման արժանացած Գերագույն խորհրդի պատգամավոր Վ. Խաչատրյանի խոսքերը, որոնք նա հայտնել էր ՀՀՇ 4-րդ համագումարից հետո մեր թղթակցին տված կարճ հարցազրույցում: *«Առնվազն տարօրինակ հնչեց, երբ հիմնական զեկուցող Տեր Հուսիկ քահանա Լազարյանը ասաց. «Քանի որ մեզ 91 թվականին չհաջողվեց հասնել օրենսդիր-գործադիր իշխանությունների եւ ՀՀՇ Վարչության գործունեության ներդաշնակմանը, մենք ստիպված անցանք նախագահական համակարգին»:* Ստիպված ենք նաեւ, օգտվելով *«Հայք»* շաբաթաթերթի 27 մարտ 1992 համարից եւ մեր ձեռքի տակ գտնվող ձայնագրությունից, ստուգել մեջբերել Տեր Հոր զեկուցման այն հատվածը, որը Վ. Խաչատրյանին առիթ է տվել *«հիմնավորելու իր կասկածելի մտքերը»:* Համեմատելով դրանք, ընթերցողը հեշտությամբ կարող է համոզվել, որ ՀՀՇ վարչության նախագահի արտահայտած մտքերը համադասախանում են Վ. Խաչատրյանի *«կասկածելի մտքերին»* ըստ բովանդակության: Ինչ վերաբերում է ձեւին, Վ. Խաչատրյանն իրոք թույլ է տվել սխալ, չակերտների մեջ առնելով Տեր Հուսիկ քահանայի արտահայտած միտքը, բովանդակության խեղաթյուրումը մեջբերելով որոշես ուղիղ խոսք:

Մեր կարծիքով, պատգամավոր Վ. Խաչատրյանը թույլ է տվել նաեւ մի ուրիշ վրիպում, երբ իր հարցազրույցում ուշադրություն չի դարձրել Տեր Հոր արտահայտած այն կարեւոր մտքին, որը զանց է առնվել «Հայք»-ի վերոհիշյալ համարում եւ որը կա մեր ձեռքի տակ գտնվող ձայնագրությունում: Կից բերվող հատվածում այն մեր կողմից վերականգնված է ընդգծված ձեւով: Նրանից պարզվում է, որ 1991 թ. մայիսին Հայաստանը փաստորեն կառավարվել է մի «վերին խմբի» կողմից, որի կազմի մեջ են եղել «Գերագույն խորհրդի, Նախարարաց խորհրդի եւ ՀՀՇ վարչության նախագահները, ինչպես նաեւ վարչության կողմից փակ-գաղտնի քվեարկությամբ ընտրված մարդիկ»:

Ահա Տեր Հուսիկ քահանայի ճառից մեզ հետաքրքրող հատվածը.

«Մայիսյան ճգնաժամի ժամանակ մի պահ թվաց, թե ներքին հակասությունները կարող են հարթվել, համենայնդեպս իշխանության թե օրենսդիր եւ թե գործադիր մարմինները գործում էին համատեղ, սակայն դա առերեւույթ էր: Մայիսին ՀՀՇ վարչությունը շատ սուր զգաց իշխանությունների ընդերքում հասունացող ճգնաժամը եւ փորձեր արեց դուրս գալու այդ ճգնաժամից, որքան հնարավոր է փիչ կորուստներով: Վարչության գրեթե անընդմեջ նիստերի, սուր բանավեճերի ընթացքում ընդունվեց մի որոշում, համաձայն որի վարչությունը ստեղծում է մի վերին ատյան, որն ի զորու լինի համակարգելու օրենսդիր, գործադիր մարմինների եւ վարչության գործունեությունը, նպատակ ունենալով հաղթահարել ներքին ճգնաժամը: **Ստեղծվեց ատյան, (ուր) որի կազմի մեջ ի պաշտոնե մտան Գերագույն խորհրդի, Նախարարաց խորհրդի եւ ՀՀՇ վարչության նախագահները, ինչպես նաեւ վարչության կողմից փակ-գաղտնի ընտրված մարդիկ:** Թվով 11 անձ:. *(Այս վերջին չընդգծված նախադասությունը չի արտասանված համագումարում. – Ծ. խ.)* Առաջին հայացքից պարզ այս որոշումը թվում է, թե ի վիճակի կլինի հարթելու հակասությունները, գտնելու ճգնաժամից դուրս գալու ուղիները, սակայն իրականությունն այլ էր, հակասությունները դարձան անհաղթահարելի:

Այդ ճգնաժամը ոչ թե անձերի, ոչ թե գաղափարախոսության կամ քաղաքականության սխալներով էր պայմանավորված, այլ համակարգի էությամբ, համակարգի անկատարությամբ: Ըստ էության, խորհրդային պետական համակարգը անկարող է աշխատել ժողովրդավարության պայմաններում: Այս գիտակցությամբ եւ դեպքերի խոր վերլուծությամբ է պայմանավորված նախագահական համակարգի անցնելու ՀՀՇ վարչության որոշումը: Մեր կարծիքով, ճգնաժամը հաղթահարելու միակ ճանապարհը գտնված էր»:

■

Նախարարություն - կոնցեռն՝ առաջարկվող դեղատոմս

Տնտեսության կառավարման մեջ գոյություն ունեն կենտրոնացման եւ ապակենտրոնացման հասկացությունները, որոնք իրար հակասում են եւ մշտապես հաջորդում: Եւ որքան էլ քաղաքականությունը փորձի տնտեսության կառավարումը կենտրոնացնել իր ձեռքում, միեւնույնն է կյանքը թելադրում է կենսական օրինաչափությունների հաղթանակը:

Կառավարման կառուցվածքի բարդացումը բնավ էլ պարտադիր տնտեսության նշան չէ, այլ նոր կառավարության ազդարար: Նոր իշխանությունը կառավարման սկզբնական շրջանում միշտ ձգտում է կենտրոնացման ուժեղացման: Սակայն վերջերս նկատվում է ապակենտրոնացում, ինչը թերեւս կառավարման փորձի, ձեռք բերման եւ խիստ վերահսկողության անարդյունավետության գիտակցման հետեւանք է:

Երբ շատանում են կառավարող մարմինները՝ նախարարությունները, ուժեղանում է նաեւ վերահսկողությունը: Այն դեպքում, երբ կենտրոնացված տնտեսական կառույցը բացակայում են, վերացել են հումքի եւ նյութերի կենտրոնացված ստացումն ու վերաբաշխումը, որոշակիորեն իմաստը փոխել է պետական պատվեր հասկացությունը, մի փոքր անհասկանալի է մնում Հայաստանի նման փոքր տուկային բաժին ընկնող նախարարությունների այդ մեծ բանակի գոյությունը:

Փորձենք ասածը պարզել կոնկրետ օրինակով: Այսպես, արդյունաբերության նախարարություն, ի՞նչ է սա, հնի անհաջող կրկնությո՞ւն, թե՞ նորություն: Նրա դերն ու նշանակությունը ընհանուր կառավարման համակարգում մեր խնդրանքով պարզաբանում է փոխնախարար պարոն Վարդան Վարդանյանը. **«Մեր նախարարությունն ունի 2 հիմնական նպատակ. առաջին՝ ստեղծել միջպետական կապերի ընդհանուր հաշվեկշիռ եւ երկրորդ՝ իրականացնել սեփականաշնորհումը: Այնուհետեւ նախարարությունը վերածվելու է կոնցեռնի՝ իր սեփական դրամատնով եւ ապրանքահումքային բորսայով, պահպանելով պետական մենաշնորհը: Կոնցեռնի կառուցվածքով նախարարությունը նորույթ չէ: Նմանը գոյություն ունի Ֆրանսիայում»:**

Առաջին հայացքից գաղափարը չափից ավելի հրապուրիչ է թվում, նախարարության ճակատագիրը որոշված: Սակայն իրականությունն այլ է: Փորձենք պատասխան գտնել անհասկանալի մնացած հետեւյալ հարցերին ինչպե՞ս է իրականացվելու սեփականաշնորհումը, արդյոք միայն պետական կառուցվածքի միջոցո՞վ, որն առաջարկվում է կառավարության կողմից, թե՞ գոյություն ունեն այլ տարբերակներ, որոնք, փորձագետների կարծիքով, ավելի արդյունավետ են՝ անցումը կոնցեռնի, նրա իրավական կարգավիճակը եւ գործունեությունը: Հարցերին պատասխանել են փոխվարչապետ **Գեւորգ Վարդանյանը** եւ պատգամավոր **Խոսրով Հարությունյանը**:

Գ. Վարդանյանը նշում է. **«Սեփականաշնորհման մասին օրենքն ընդունվելու է Գերագույն խորհրդի կողմից, իսկ նախարարությունները լինելու են ընդամենը կատարողներ: Առայժմ նախատեսված է 1992 թ. ընթացքում սեփականաշնորհել խանութները, թեթեւ արդյունաբերության որոշ փոքր օբյեկտներ եւ շինարարության անավարտ օբյեկտներ: 1993 թ.-ից նոր միայն կսկսվի մեծ սեփականաշնորհումը, որը կարող է տարիներ տեւել»:**

Այստեղից կարող ենք հետեւություն անել, որ նախարարությունը դեռ երկար ժամանակ գոյություն կունենա եւ կհասցնի հզորանալ, ինչպես նրանք, որոնք այսօր ստեղծվում են հետագայում ինքնավերացման նպատակով: Հակառակ դեպքում, այն ի վիճակի չի լինի իրականացնել իր վրա վերցրած պարտականությունները: Նորից նկատվում է իշխանության կենտրոնացում կառավարության ձեռքում՝ նախարարության միջոցով պետական սեփականության մենաշնորհը պահպանելու շնորհիվ:

Կոնցեռնի խնդրի կապակցությամբ փոխվարչապետի բացատրությունը հետեւյալն է. **«Նախարարության՝ կոնցեռնի վերածման ժամանակ որպես օրինակ բերված ֆրանսիական փորձը մեզ համար մատչելի է միայն սոցիալական արդարության տեսակետից, իսկ ազգային հոգեբանության՝ ոչ: Մեզ՝ հայերիս, ավելի բնորոշ է անհատական մոտեցումը: Բացի այդ, կոնցեռնի ինքնաբերաբար ստեղծումը բոլորովին էլ պարտադիր չէ այդ համակարգի ձեռնարկությունների համար: Իսկ նախարարության ենթակայությունը պարտադիր է ձեռնարկությունների համար, ինչը հետագայում կոնցեռնի տեսքով եւս կարող է պարտադրվել:**

Իմ խորին համոզմամբ, կոնցեռնը պետք է ստեղծվի ներքուից, երբ կլինի դրա կենսական անհրաժեշտությունը, այն էլ մասնավոր սեփականության հիման վրա, քանի որ միջին եւ ծանր արդյունաբերությունում արդարացված չէ պետական մենաշնորհի պահպանումը: Այն ավելորդ բեռ է պետության ուսերին: Իսկ չսեփականաշնորհված պետական ձեռնարկությունները կառավարության հետ պետք է աշխատեն պայմանագրային հիմունքներով, որպեսզի տնտեսությունը որոշակի պատասխանատվություն կրեն իրենց գործունեության արդյունքների համար, ինչը անցումային ժամանակաշրջանի գների թռիչքային աճի պայմաններում խիստ բացակայում է»:

Սեփականաշնորհման իրականացման միջազգային փորձի մեկ այլ տարբերակը եւ կոնցեռնի իրավական կարգավիճակը ներկայացնում է պրոֆ. Խ. Հարությունյանը. **«Սեփականաշնորհումը պետք է իրականացնել ոչ թե նախարարությունների միջոցով, այլ ներդրումներ կատարող անկախ բանկերի: Մենք վաս ժառանգություն ունենք. խայտաբղետ տնտեսություն՝ անշարժացած պետական հսկա ձեռնարկություններով, որոնք հարյուր միլիոնների հասնող պարտքեր ունեն: Պետք է շատ զգույշ վերաբերվել սեփականաշնորհմանը եւ չշտապել: Նախ կարելի է ներդրում կատարող անկախ բանկերին հանձնարարել ձեռնարկությունների վերականգնումը, պարտքերի մարումը եւ նոր միայն սեփականաշնորհումը: Ինչպես տեսնում ենք, խնդրի լուծումն արդեն նախարարության ուժերից վեր է: Սակայն այս շրջանում նախարարության գոյությունն արդարացված է որպես անցումնային կառուցվածք: Դեռ մեծ պահանջ կա պետական պատվերների կատարման կոնվերսիայի պայմաններում:**

Շուկայական տնտեսությունը ոչ միայն նոր ինքնակարգավորող օրենսդրական մեխանիզմների ներդրումն է սեփականատիրոջ փոփոխությամբ պետականից մասնավորի, այլեւ, որ ավելի կարեւոր է, տնտեսական գործունեության արդյունքի նկատմամբ քաղաքական պատասխանատվությունից անցումը տնտեսական պատասխանատվության:

Ինչ վերաբերում է նախարարության անցմանը կոնցեռնի կամ հոլդինգային ընկերության (կենտրոնացված կապիտալ ներդրումներ կատարող մի ընկերություն է, որի ձեռքում է գտնվում բաժնետիրական ընկերության վերտուգիչ ծառը, այսինքն՝ բաժնետոմսերի 51 տոկոսը), ապա այն միանգամից դառնում է ինքնուրույն իրավական սուբյեկտ եւ գործունեության արդյունքների համար պատասխանատու է իրեն ֆինանսավորող բանկի առջեւ: Այն պետք է ենթարկվի տուկային այնպես, ինչպես մասնավորները եւ պետական է այնքանով, որքանով պետությունն է տնօրինում շահույթի բաշխումը: Այժմ պետական ձեռնարկության տնօրենը սեփականության համար ոչ մի պատասխանատվություն չի կրում իր աշխատանքի արդյունքներով: Սակայն վերը նշված պայմանը, կարծում եմ, կավելացնի տնօրենների զգոնությունը՝ վերացնելով նախկինում եղած բյուջետային հիմնարկ եւ պետական լրավճար (դոտացիա) հասկացողությունը: Լրավճարը տրվում է միայն դրամատնից եւ, փաստորեն, դառնում է վարկ: Մի տարբերությամբ, որ վարկ վերցնողներին որպես երաշխավորող հանդես է գալիս պետությունը»:

Ստեղծվում է որոշակի հակասություն սկզբունքների ներկայացման, վարման ներկա եւ ապագա քաղաքականությունների միջեւ: Նուրբ շրջադարձ է կատարվում ձրկին դեպի վարչահրամայական մեթոդներ՝ տնտեսության կենտրոնացված կառավարում: Մնում է միայն լավատես լինել, որ մրցակցությունը եւ տնտեսական կյանքի դաժան ճշմարտությունը, հզորացնելով մասնավոր արտադրողներին, միաժամանակ կաղախովեն պետական մենաշնորհին յուրահատուկ հակակշիռ:

ԳԱՅԱՆԵ ԱՊԵՏՅԱՆ

«Հանդիսատեսը միշտ հավատարիմ է մնում թատրոնին»

Հարցազրույց Կիրովականի Հ. Աբելյանի անվան թատրոնի գլխավոր ռեժիսոր Վահե Շահվերդյանի հետ

Որքան էլ զարմանալի թվա, Կիրովականի Հ. Աբելյանի անվան թատրոնը հանրապետությունում միակն է, որ էներգետիկ ճգնաժամի պայմաններում գործել է անխափան (18 պետական թատրոններից ոչ մեկը երեւանում այս տարի ոչ մի ներկայացումով հանդես չի եկել):

Հ. Աբելյանի անվան թատրոնի գլխավոր ռեժիսոր, հանրապետության արվեստի վաստակավոր գործիչ Վահե Շահվերդյանին մեր թղթակիցը հանդիպեց հերթական փորձից առաջ: Ասել է թե պահպանվում է թատրոնի ստեղծագործական ոիթմը, մանավանդ, որ այդ օրը նա պետք է վարեր երեք նոր ներկայացումների փորձերը:

– Պրն. Շահվերդյան, ի՞նչ զուգահեռներ կարելի է անցկացնել թատրոնի երեկվա եւ այսօրվա միջեւ:

– Թատրոնի երեկվա օրը, ըստ իս, չի, սահմանափակվում միայն ձոն անցյալով, այլ ընդգրկում է աբելյանցիների անցած 60-ամյա ուղին, հետեւաբար երեկը թատրոնի եւ հաջողություններն են, եւ ծանր օրերն ու դառնությունները, եւ անվանի ստեղծագործողների թողած ավանդները ու դասերը, եւ, իհարկե, այն համընդհանուր ճանաչումը, որ վայելեց թատրոնը հանրապետությունում եւ արտասահմանում: Իսկ այսօրն ամենից առաջ կարեւոր է նրանով, որ, չնայած տեւական ծանր կացությանը, մեր թատրոնը ոչ մի օր չփակեց իր դռները: Կոլեկտիվը չընկրկեց ոչ գրչի, ոչ կենցաղային անելանելի թվացող պայմանների առջեւ ուժերի ներածին չափով հավատարիմ մնալով իր բարձրաճաշակ ու խստապահանջ հանդիսատեսին: Հավատարմությունն անշուշտ փոխադարձ է, քանզի մեր հանդիսատեսը միշտ հավատարիմ է մնում թատրոնին:

– Ի՞նչ սպասելիքներ կարող է ունենալ հանդիսատեսը մոտ ժամանակներս:

– Ապրիլի 10-ից հետո կկայանան Մուրացանի «Ռուզան» («Արցախի դուստրը») հերոսական դրամայի եւ ամերիկյան ժամանակակից դրամատուրգ Նիլ Սայմոնի «Կրակոց սիրահարը» կատակերգության թեմիերները, իսկ մինչեւ թատերաշրջանի ավարտը կներկայացվեն Հ. Մաթեւոսյանի «Աշնան արեւ», Ա. Օստրովսկու «Անմեղ մեղավորները», Գ. Մահարու «Կապիկը եւ ոսկեմագիկը» (մանուկների համար) ներկայացումները:

– Անցած տարի աբելյանցիները, բացի Չեխովյան փառատոնից, բարձր գնահատականների արժանացան նաեւ միջազգային փառատոներում՝ ստանալով դափնեկրի կոչում: Իսկ այս տարի արտասահմանյան հյուրախաղեր չե՞ն սպասվում:

– Մոտ ապագայում մեր թատրոնը հյուրախաղերի կմեկնի Իրան (Թեհրան, Իսպահան), ըստ Հայաստանի եւ Իրանի մշակույթի նախարարությունների միջեւ կնքված պայմանագրի, որով նախատեսվում են նաեւ իրանյան թատերախմբերի հյուրախաղեր Հայաստանում: Աբելյանցիներն առաջիններից մեկը կներկայացնեն հայկական թատրոնը Իրանում:

Հարցազրույցը վարեց
ՄԱՆՎԵԼ ՄԻԿՈՅԱՆԸ

FOR RENT
Furnished studios
in Paris

Ave Foch and Champs-Elysées areas

Rent: $1200 a month
(same price 1,2 or 3 weeks)

Վարձ՝ $1200 ամիսը,
(1, 2 կամ 3 շաբաթուան համար նոյն գինը)

ՎԱՐՁՈՒ
Կահաւորուած սթիւտիոներ
Փարիզի մէջ
Փորթ Մայօ եւ Շան զ'Էլիզէի
թաղամասերը

For Reservations:
Raymond Yezeguelian

34, Ave des Champs-Elysées, 75008 Paris Tél : (331) 43.59.65.81 Fax : (331) 40.73.08.59

digitised by A.R.A.R.@

Քանի դեռ Արցախի խնդիրը ԽՍՀՄ ներսին հարց էր, Միջին Արևելքի բոլոր երկրները խիստ չեզոքություն էին դրսևորում և մեկնաբանություններում բավարարվում էին ՏԱՍՍ-ի պաշտոնական հաղորդագրություններով: Բացառություն էր կազմում, թերևս, միայն Իրանը, որի սահմանը վերակառուցման վերջին տարում բազմիցս հատվում էր ադրբեջանցիների կողմից, որոնք փորձում էին իրենց ազգակից իրանցի ազերիներից տարաբնույթ աջակցություն ստանալ հայ «գրոհայիններին» և դուս գաղութարարների դեմ պայքարելու համար: Պաշտոնական Թեհրանը, պահպանելով չեզոքության ձևական կողմերը, միաժամանակ չէր խոչընդոտում սահմանային խախտումներին:

Հավանաբար, բուրական պաշտոնական շրջանակները գործը վերջացրած են համարում, իսկ իրադարձությունների անիվն անդառնալի, ուստի կարիք չեն զգում այդքան թաքցնելու իրենց զգացմունքները և Հայաստանի, և հայերի նկատմամբ: Այնուամենայնիվ, պետք է ասենք, որ Հայաստանի Հանրապետության բաղաքացիների նկատմամբ բարբարոսության դրսևորումներն ու ուժային մեթոդներն առաջիկայում նորից իրենց տեղը կզիջեն դիվանագիտությանը, որը, ինչ խոսք, շատ ավելի վտանգավոր է Հայաստանի համար: Եթե Թուրքիային հաջողվի արցախյան իրադարձությունների հետ կապված հակահայկական հիստերիան տեղափոխել Միջին Ասիա և Հյուսիսային Կովկաս, ապա «մայր հայրենիքը» նորից կարող է վերադառնալ բաղաքակիրթ եվրոպական երկրի դերին, որը նույնիսկ երբեմն-երբեմն կասնձի կրտսեր եղբայրների ծայրահեղականությանը:

Իրանն իր բաղաքական ու տնտեսական հնարավորություններով գիջում էր Թուրքիային և գիտակցում, որ այս փուլում, երբ Միջին Ասիայում ու Ադրբեջանում իշխանության գլուխ են կանգնած ազգայնական ուժերը, իսլամական դաշինքի ստեղծման հնարավորությունները նվազագույն են: Ժամանակ է պետք, մինչև որ սոցիալ-տնտեսական պայմանների անբավարարվածության հետևանքով բնակչության լայն զանգվածները կընդվզեն իշխող ազգայնականների դեմ բարձրացնելով իսլամի կանաչ դրոշը: Թուրքիայի հաղթարշավով պայմանավորված Իրանի համեմատական կրավորականությունը դրական դեր խաղաց հայ-ադրբեջանական հարաբերություններում միջնորդի դերը ստանձնելու գործում: Թուրքիայի զգացմունքային պոռթկումը հնարավորություն տվեց Իրանին շրջանցելու նրան և, ավելին, ապացուցելու միջազգային հանրությանը, որ կրոնական արմատականության հայրենիքը կարող է արեմտականացված Թուրքիայից շատ ավելի հավասարակշռված լինել և նման նուրբ խնդրին ապակրոնական մոտեցում ցուցաբերել: Զարգացնելով իր հաջողությունը, Իրանը հնարավորություն կտանա անհրաժեշտ փոփոխությունների մեջ մտնել միջազգային տարբեր կազմակերպությունների և կոնֆլիկտի կարգավորման գործընթացին մասնակցող արեմտյան երկրների հետ, ինչը խիստ կարևոր է Իրանի համար, եթե հաշվի առնենք, որ Իրանը ԱՄՆ-ի կողմից ձևավորված միջազգային շրջափակումից դուրս գալու կարիքն ունի: Իրանի մասին ստեղծված ահաբեկիչ և նախահարձակ երկրի ստերեոտիպը կարող է բավականին մեղմանալ շնորհիվ Արցախի խնդրում ցուցաբերած հաջող միջնորդության: Թե որքան ժամանակով և իրադարձությունների զարգացման մինչև որ աստիճանը Իրանը հավատարիմ կմնա չեզոքությանը, ցույց կտա ժամանակը: Ամեն դեպքում բազմամիլիոնանոց ադրբեջանական բնակչությունը, կրոնական ընդհանրությունն ու իրավիճակի փոփոխության հետ կապված քաղաքական շահերը գործոններ են, որոնք պետք է ճիշտ հաշվի առնվեն:

Արաբական երկրներն ու Իսրայելը առայժմ ոչնչով չեն արտահայտել իրենց վերաբերմունքը կոնֆլիկտի նկատմամբ: Սա բացատրվում է մի շարք պատճառներով: Նախ նրանց բաղաքական ողջ կառուցվածքն ուղղված է արաբա-իսրայելական բանակցություններին, երկրորդ նրանք բավական կրավորական ու դանդաղաշարժ են բոլոր այն խնդիրներում, որոնք անմիջականորեն չեն առնչվում իրենց ավանդական խնդրի հետ, երրորդ Հայաստանի ու Ադրբեջանի հարաբերությունները Իսրայելի և արաբական երկրների հետ առայժմ միայն պրոտոկոլային բնույթ են կրում, թեև պետք է փաստել, որ այստեղ Ադրբեջանն առաջնություն ունի Հայաստանի նկատմամբ:

Պետք է ասենք, որ առաջիկայում եւս Իսրայելը ոչ մի առանձնակի ակտիվություն չի ցուցաբերի նրանց հանդեպ: Սիրիան ու Իրաքը, որ իշխանության գլուխ են կանգնած ազգային-սոցիալիստական վարչակարգերը, գեր են բաղաքականության մեջ կրոնական սկզբունքներով առաջնորդվելու ավանդույթից և Արցախի խնդրին կարող են առնչվել ավելի լայն կոնտեքստում, օրինակ, կասկածելի լայն կոնտեքստում, օրինակ, կասկածելի լայն կոնտեքստում, օրինակ, կասկած

Աշխարհը մտահոգված է Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտով

Առաջին հայացքից տեղային թվացող Ղարաբաղյան կնճիռը վերածվեց իսկական ռազմերազմի՝ սպառնալով ոչ միայն Անդրկովկասի, այլեւ շրջանի ու ողջ աշխարհի անվտանգությանը: Ահա թե ինչու, թեեւ մեծ ուշացումով, սակայն ռազմերազմի վտանգավոր օջախը հանգցնելու հարցերով ստիպված էին զբաղվել ԵԱՀԽ-ը, ՄԱԿ-ը, որի գլխավոր քարտուղարը ուղարկեց իր հատուկ բանագնաց Սայրուս Վենսին, շուտով Մինսկում միջազգային խորհրդակցություն կլինի Ղարաբաղի հարցով:

Փորձում են միջնորդական առաքելություններ ստանձնել հարեւան Թուրքիան եւ Իրանը, որոնք իրենց հերթին դեմ չէին լինի օգտվել ստեղծված իրադրությունից, որպեսզի շրջանում ամրացնեն իրենց դիրքերը եւ ընդլայնեն ազդեցության ոլորտը:

Ի՞նչ է լինելու վաղը Անդրկովկասում: Կհաղթի՞ արդյոք առողջ դատողությունը, կովող կողմերն ի զորու կլինե՞ն հաշտության հանգել: Այս հարցերն են տալիս տեղեկատվության զանգվածային միջոցները, որոնք ինչ-որ չափով արտահայտում են իրենց երկրների եւ կառավարությունների դիրքորոշումը:

«Ոչ հայերը, ոչ ադրբեջանցիները, գրում է լոնդոնյան «Թայմսը», չեն կարող հավակնել ամբողջ աշխարհի կատարյալ համակրանքն ու հաղթական աջակցությունը»: Թերթը մտահոգություն է հայտնում, որ «ԵԱՀԽ-ի երկու անդամներ իսկական ռազմերազմ են մղում, որը աղակայուն նացնող հետեւանքներ կարող է ունենալ Ռուսաստանի, Կենտրոնական Ասիայի եւ Մերձավոր Արեւելքի համար»:

«Թայմս»-ը Ղարաբաղի հառաջիկա կոնֆլիկտը համեմատում է լիբանանյան հայտնի կոնֆլիկտի հետ: Այս կոնֆլիկտները խոշոր տերությունների տեսակետից թվում են անլուծելի, տեղայնացված եւ երկրորդական: Այնուամենայնիվ, դրանց սրմանը զուգընթաց Ռուսաստանի, Իրանի, Թուրքիայի, ԵԱՀԽ-ի առաքելության եւ ՄԱԿ-ի կողմից առաջ են եկել նոր խաղաղարար նախաձեռնություններ:

Խոսելով Լեռնային Ղարաբաղին չեզոք կարգավիճակ շնորհելու առաջարկվող ծրագրերի վերաբերյալ, թերթը գրում է մի այլընտրանքի մասին: Լեռնային Ղարաբաղի բնակչությունը վերաբնակեցնել Նախիջեւանում եւ հակառակը: Թուրքիան հետեւյալ լուծումն է առաջարկում *«երկակի միջանցք»*. ստեղծել աղաղազմականացված գոտի, որը հայերին թույլ կտա ազատ մուտք գործել Լեռնային Ղարաբաղ, ադրբեջանցիներին՝ Նախիջեւան: Սակայն ո՞վ պիտի պաշտպանի այդ երկակի միջանցքը, տրամաբանական հարց է տալիս «Թայմս»-ը:

Շոշափելով երկու կողմերի բռնամանքը, բնակչության կասկածամտությունը, թերթը կասկած է հայտնում, թե դիմակայության մեջ ուժասպառ լինելով, կողմերը ստիպված կլինեն փոխզիջման գնալ եւ այդպիսի կարծիք համարում է խոցելի, ստրատեգիական տեսակետից վտանգավոր: «Թայմս»-ը հատուկ ընդգծում է, որ Թուրքիան գնալով ավելի է ներքաշվում կոնֆլիկտի մեջ: *«Անկարան կարող է կարեւոր դեր խաղալ խոսխոսելով աշխարհիկ ժողովրդավարություն Միջին Ասիայում: Թուրք հասարակությունը, որ կասկածամիտով է վերաբերում հայերին եւ նրանց հզոր ափյուռիին, աջակցում է Ադրբեջանին, կարող է ստիպել իր կառավարությանը հրաժարվել անկողմնակալությունից: Այդ ժամանակ հայերը կարող են խոսել Թուրքիայի աջակցությամբ նոր ցեղասպանության մասին, պատերազմը կարող է վերածվել հրետանային եւ մուսուլմանների միջեւ առճակատման: Արեւմուտքում գայթակղություն կծագի աջակցել Հայաստանին եւ Արեւմտյան Եւրոպայի դիրքորոշման նկատմամբ Թուրքիայի բարձրացած չնամությունը կարող է վերածվել ազգայնամոլության վտանգավոր ՆԱՏՕ-ի եւ շրջանի կայունության համար: Ռուսի Արեւմուտքը պետք է իր լծակը, որպեսզի երկու կողմերին ստիպի բանակցություններ սկսել»:*

Շրջանում Թուրքիայի աշխուժացման մասին է գրում նաեւ փարիզյան **«Ինթերնեյշընալ Հերալդ Թրիբյուն»** թերթը: *«Այն ժամանակ, երբ Թուրքիայի արեւելյան սահմաններում մարտեր են գնում ադրբեջանցիների եւ հայերի միջեւ, Անկարայի իշխանությունները դրսեւորում են խորացող անհանգստություն, հանկարծ այդ կոնֆլիկտը իրենց շներքաշի պատերազմի մեջ, որը հարություն է տալիս անցյալի տեսիլներին: Ինչպես Անկարան կուրանում է շրջանում տիրելու հնարավորությունից, այդպես այդ վտանգը մեծանում է: Վերջերս արեւմտյան մի դիվանագետ ասում էր, թե Թուրքիան խանդավառությամբ ընդունեց այն գաղափարը, որ նախկին Խ. Միության փլուզումը նրան չտեսնված հնարավորություն ընձեռեց ընդլայնել իր ազդեցությունը, լավ բիզնես անել եւ իր դիվանագիտական առաքելության դրոշը բարձրացնել Միջին Ասիայի հանրապետություններում, որ բնակեցված են հիմնականում մուսուլմաններով, առավել եւս թուրքալեզու ժողովուրդներով: Այսինքն Ադրբեջանից չինական սահման ձգվող շրջանում... Ամեն օր թերթերի առաջին էջերում կարդալով ազերի մուսուլմանների զանգվածային սպանությունների մասին, որ կատարել են հրետանյա հայերը, շատ թուրքեր սկսում են դժգոհել սեփական կառավարությունից, որն իր ողջ վճռականությամբ չի գործում կռիվները դադարեցնելու համար. չէ՞ որ այնտեղ զոհվում են նույն լեզվով խոսող, նույն աստծուն երկրպագող, արմատներով դեղի նույն էթնոսը ձգվող ադրբեջանցիներ»:*

Միաժամանակ թերթը գրում է, հակառակ նախկին վարչապետ Մեսութ Յըլմազի եւ նախագահ Թուրգուտ Օզալի վերջերս արված հակահայ հայտնի հայտարարությունների, ներկայիս վարչապետ Դեմիրելի եւ նրա կողմնակիցների դիրքորոշման մասին, որոնք գտնում են, որ չմտածված, հապճեպ գործողությունները կարող են կոնֆլիկտին կրոնական երանգ տալ եւ ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիային դնել իր արեւմտյան դաշնակիցների հետ համեմատած հակոտնյա վիճակում այդպիսի պատերազմում, որ հաճախ համարում են որպես քրիստոնյաների եւ մուսուլմանների միջեւ պատերազմ: *«Մենք խիստ ցավակցում ենք ադրբեջանական ժողովրդի տառապանքներին, սակայն մի սխալ քայլը կարող է նրան առավել վիճակ պատճառել, պտաց Դեմիրելը: Իսկ այդպիսի քայլը Թուրքիայի կողմից կարող է ողջ աշխարհին պիտի կանգնել Հայաստանի կողմին»:*

Լեռնային Ղարաբաղի ճգնաժամը հատկապես վտանգավոր է, քանի որ հայերը երբեք չեն հրաժարվել Թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջներից, ինչպես եւ այն պրնդումներից, թե թուրք-օսմանները առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում նրանց նկատմամբ ցեղասպանության հանցանք են գործել: Սակայն թուրքերը հերքում են այդ մեղադրանքները: Թուրքիան ճանաչել է Հայաստանի անկախությունը, սակայն նրա հետ դիվանագիտական կապեր չի հաստատել, ինչպես որ արել է միջինասիական հանրապետությունների դեմքում:

Եւս մի միտք է արտահայտում «Ինթերնեյշընալ Հերալդ Թրիբյունը». *«Երբ անցյալ տարի խորհրդային կայսրությունը փլուզվեց եւ նոր պետություններն իրենց անկախությունը հռչակեցին, շատերը նշեցին, որ դա իսկապես Թուրքիայի «ատենային ժամն» էր: Սակայն այդ ժամը կարծ եղավ: Լեռնային Ղարաբաղի կռիվները կարող են ամեն ինչ փոխել: Տեսնելով զգացմունքների այդպիսի բռնկում, թուրքական իշխանությունները բոլորին խորհուրդ են տալիս զսպվածություն հանդես բերել եւ պաշտպանում ԵԱՀԽ-ի վերջերս արած առաջարկությունը էմբարգո սահմանել շրջան առաքվող զենքի վրա, որպեսզի վերջ տրվի կռիվներին»:*

Մյունխենյան **«Զյուդդոյչե Ցայտունգ»**-ի կարծիքով, Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ օրեցօր խորացող առճակատումը Թուրքիայում գրգռում է մտքերը: Վերջերս կովկասյան երկու պետությունների միջեւ պատերազմում Թուրքիայի ունենալիք դերի վերաբերյալ կատաղի վեճերը նույնիսկ հանգեցրին արյունոտ բախումների Ստամբուլի համալսարանի երկու տարբեր խմբավորումների միջեւ: Մրանցից մեկը աջերը, պահանջում էր, որ Թուրքիան միանշանակ կանգնի եղբայրական ազգերի ժողովրդի կողմը, որը հավասարարժեք է կոնֆլիկտին թուրքական զորքերի ուղղակի միջամտությանը, մյուս կողմը ձախերը, հանդես էր գալիս կոնֆլիկտում Անկարայի կողմից չեզոքության դահիրանման կողմ: Դեռ վերջերս այս երկու դիրքերը աշխուժորեն քննարկվում էին թուրքական մամուլում, սակայն վերջին ժամանակներս զանգվածային տեղեկատվության միջոցները գործնականում դադարել են լուսաբանել Ղարաբաղյան կոնֆլիկտը: Դիտորդներն այդ ձգտումը բացատրում են արդեն իսկ խիստ շիկացած հասարակական կարծիքի սրընդարը սառեցնելու ձգտմամբ:

Հետաքրքրություն են ներկայացնում թերթի բերած պատերազմի երկու հավանական սցենարները: Դրանցից առաջինի համաձայն, Թուրքիան վաղ թե ուշ տեղի է տալու սարբեջանցիների եւ գեղանից միջինասիական թուրքական հանրապետությունների ճնշումներին եւ գործուն կերպով խառնվելու է կոնֆլիկտին: Եթե հայերը ուժեղացնեն հարձակողական գործողությունները կամ էլ ավելին գործուն օգնություն ստանան Ֆրանսիացիներից եւ ամերիկացիներից, ապա Թուրքիան նույնպես ստիպված կլինի անհապաղ կերպով ձեռնարկել աշխույժ գործողություններ: Երկրորդ սցենարը հենվում է այն ենթադրության վրա, որ Հայաստանը կարող է հայտարարել Նախիջեւանի նկատմամբ իր հավակնությունների մասին: Այդ ժամանակ Նախիջեւանը, որ վարչականորեն մտնում է Ադրբեջանի կազմի մեջ եւ նրանից կտրված է հայկական տարածքով, կարող է խնդրել հարեւան Թուրքիային միանալու նրան: Սակայն դա, ըստ թուրք հասարակայնության դատողությունների, երբեք թույլ չեն տա Արեւմտյան երկրները:

Լեռնային Ղարաբաղում ծավալված հակամարտություններով հետաքրքրված Իրանի ուշադրությունը գրավեցին լիբանանյան-հայկական վերջին բանակցությունները, որոնք *«խիստ աջակցություն ստացան լիբանանահայ գաղութի կողմից, որ կառավարությունում ներկայացված է նախարարներ Խ. Բաբիկյանով եւ Ա. Զոհրաբյանով»*: Բեյրութի **«Ադ-Դիյար»** թերթը, հայտնելով այդ մասին, գրում է, թե լիբանանահայ գաղութի եւ Հայաստանի միջեւ արդեն վաղուց հաստատվել են ամուր հարաբերություններ, որոնք ընդլայնվել եւ ամրացել են հայ-ադրբեջանական կոնֆլիկտի սրմանը զուգընթաց, հատկապես լիբանանահայ պատգամավորության Հայաստան կատարած այցելությունից հետո: Այն առաջացրել է իրանցիների սուր հետաքրքրությունը: Թերթն ընդգծում է, որ Իրանի դիվանագետները Բեյրութում մի շարք հանդիպումներ են ունեցել պատգամավորներ են ունեցել հետ այդ այցելության, ինչպես նաեւ Բաֆֆի Հովհաննիսյանի Լիբանան կատարած այցելության եւ կողմերի միջեւ տեղի ունեցած բանակցությունների կապակցությամբ:

Պատրաստեց ՀԵՆՐԻԿ ԼԻԼՈՅԱՆԸ

Թուրքական փաստաթղթերի խոստովանությունները

Պատմաբան, թուրքագետ Ռաֆֆի Կոնդակչյանը խմբագրությանը հանձնեց երկու հայտարարություն, որ կատարել են երկու թուրք զորահրամանատարներ իրարից գրեթե 100 տարվա տարբերությամբ: Կարծում ենք, այն կհետաքրքրի մեր ընթերցողներին:

1823 թվականի ամռանը Օսմանյան կայսրության 70 հազարանոց զորքերը թնդանոթներով եւ ռումբերով զինված, Իբրահիմ Փաշայի գլխավորությամբ Թիֆլիսից արշավեցին Գանձակի վրա: Քաղաքի բնակչությունը, որի մեծամասնությունը կազմում էին հայերը, 18 օր տարունակ ուժեղ մարտեր մղեց թուրքական զորքերի դեմ: Մրանք, թողնելով հազարավոր սպանվածներ եւ բազմաթիվ գերիներ, հետ նահանջեցին: Գերի վերցվեց նույնիսկ մեկ փաշա, որը Ղարաբաղի հայերին հետեւյալ կերպ բացատրեց թուրքական արշավանքի նպատակները. «Սուլթանը հրաման է արձակել կոտորել այս երկրի հայերին եւ ողջակիզել բաներին (իմա պարսիկներին), որովհետեւ ռուսական թագավորի զորքն անցել է Ծովի (Կասպից) այս կողմը եւ մենք պետք է հարձակվենք նրանց վրա: Հայերը պետք է ոչնչացվեն, իսկ այս երկուներն ավերվեն, որպեսզի բացվի մեր ճանապարհը: Եթե դուք (հայերդ) չփակեիք մեր ճանապարհը, մենք հիմա գնացել էինք Դերբենտի եւ Բաքվի վրա, որոնք արդեն մերն են»:

1918 թվականի մայիս-հունիս ամիսներին Բաքումում տեղի էին ունենում բանակցություններ, սկզբում Անդրկովկասյան սեյմի, իսկ այնուհետեւ իրենց անկախությունը հռչակած Անդրկովկասի հանրապետությունների եւ Օսմանյան Թուրքիայի պատվիրակությունների միջեւ: Բանակցություններն Օսմանյան Թուրքիայի եւ Հայաստանի Հանրապետության միջեւ ավարտվեցին հունիսի 4-ին ստորագրված Բաթումի թալանչիական պայմանագրով: Մայիսի 30-ին, կովկասյան ռազմածակատի թուրքական զորքերի հրամանատար Մեհմեդ Վեհիբ փաշան հետեւյալն ասաց Հայաստանի պատվիրակության անդամներին. «Դուք տեսնում եք, որ ճակատագիրը Թուրքիային բաշում է արեւմուտքից արեւելք: Մենք հեռացանք Բալկաններից, կհեռանանք նաեւ Աֆրիկայից, բայց մենք պետք է շարժվենք դեպի արեւելք: Այնտեղ է մեր արյունը, մեր կրոնը եւ լեզուն: Եւ սա տարերային ձգողություն ունի: Մեր եղբայրները Բաքու, Դաղստան, Թուրքեստան եւ Ադրբեջան են: Մենք պետք է ճանապարհ ունենանք դեպի այդ երկրները եւ դուք՝ հայերդ, կանգնած եք մեր այդ ճանապարհի վրա: Պահանջելով վանը՝ դուք փակում եք մեր ճանապարհը դեպի Պարսկաստան, պահանջելով Նախիջեւանը եւ Զանգեզուրը՝ դուք արգելք եք դառնում մեզ իջնելու Քուրի հովիտը եւ գնալու Բաքու: Կարսն ու Ախալքալաքը փակում են մեր ճանապարհը դեպի Ղազախ եւ Գանձակ: Դուք պետք է մեկ կողմ քաշվեք եւ մեզ ճանապարհ տաք: Ահա թե որտեղ է մեր հիմնական վեճը: Մեզ պետք են երկու լայն ճանապարհներ, որոնք հնարավորություն կտան մեր բանակներին առաջ շարժվելու եւ պաշտպանվելու: Մեկ ճանապարհը՝ Կարս-Ախալքալաք-Բորչալու-Ղազախն է, որը տանում է դեպի Գանձակ, մյուսը գնում է Շարուր-Նախիջեւան-Զանգեզուրով դեպի Քուրի հովիտը: Դուք կարող եք մնալ սրանց մեջտեղը, այսինքն Նոր Բայազետի եւ Էջմիածնի շուրջը»:

Վեհիբ փաշան, որոշ տվյալների համաձայն, Անդրկովկասյան սեյմի կառավարության ռազմական նախարար գեներալ Օղիսելիձեի ազգականն էր: Սա եւ կառավարության նախագահ Չխենկելիի հրամանի համաձայն 1918 թ. ապրիլին Կարս բերդաքաղաքը առանց կռվի հանձնվեց թուրքական զորքերին: Զորքերի հրամանատարը Վեհիբ փաշան էր:

ՌԱՖՖԻ ԿՈՆԴԱԿՉՅԱՆ
պատմաբան

Ադրբեջանի ԱԺ-ն

«Ոչ հայերը, ոչ ադրբեջանցիները, գրում է լոնդոնյան «Թայմսը», չեն կարող հավակնել ամբողջ աշխարհի կատարյալ համակրանքն ու հաղթական աջակցությունը»: Թերթը մտահոգություն է հայտնում, որ «ԵԱՀԽ-ի երկու անդամներ իսկական ռազմերազմ են մղում, որը աղակայունացնող հետեւանքներ կարող է ունենալ Ռուսաստանի, Կենտրոնական Ասիայի եւ Մերձավոր Արեւելքի համար»:

«Թայմս»-ը Ղարաբաղի հառաջիկա կոնֆլիկտը համեմատում է լիբանանյան հայտնի կոնֆլիկտի հետ: Այս կոնֆլիկտները խոշոր տերությունների տեսակետից թվում են անլուծելի, տեղայնացված եւ երկրորդական: Այնուամենայնիվ, դրանց սրմանը զուգընթաց Ռուսաստանի, Իրանի, Թուրքիայի, ԵԱՀԽ-ի առաքելության եւ ՄԱԿ-ի կողմից առաջ են եկել նոր խաղաղարար նախաձեռնություններ:

Խոսելով Լեռնային Ղարաբաղին չեզոք կարգավիճակ շնորհելու առաջարկվող ծրագրերի վերաբերյալ, թերթը գրում է մի այլընտրանքի մասին: Լեռնային Ղարաբաղի բնակչությունը վերաբնակեցնել Նախիջեւանում եւ հակառակը: Թուրքիան հետեւյալ լուծումն է առաջարկում *«երկակի միջանցք»*. ստեղծել աղաղազմականացված գոտի, որը հայերին թույլ կտա ազատ մուտք գործել Լեռնային Ղարաբաղ, ադրբեջանցիներին՝ Նախիջեւան: Սակայն ո՞վ պիտի պաշտպանի այդ երկակի միջանցքը, տրամաբանական հարց է տալիս «Թայմս»-ը:

Շոշափելով երկու կողմերի բռնամանքը, բնակչության կասկածամտությունը, թերթը կասկած է հայտնում, թե դիմակայության մեջ ուժասպառ լինելով, կողմերը ստիպված կլինեն փոխզիջման գնալ եւ այդպիսի կարծիքը համարում է խոցելի, ստրատեգիական տեսակետից վտանգավոր: «Թայմս»-ը հատուկ ընդգծում է, որ Թուրքիան գնալով ավելի է ներքաշվում կոնֆլիկտի մեջ: *«Անկարան կարող է*

թաղրում է նաեւ Իրանի առավել ակտիվ մասնակցություն միջազգային կազմակերպությունների աշխատանքին, արտասահմանյան բիզնեսի հետ կապերի աշխուժացում, շրջանային համագործակցության երկարաժամկետ ծրագրերի ստեղծում:

Այս քաղաքականության կողմնակիցը եւ իրականացնողը միշտ համարվել է Վելայաթին, ուստի կառավարմամբ թերթի կողմից արտգործնախարարի չոր քննադատությունն անհանգստացնում է: Կարելի է ենթադրել, թե Հաշեմի Ռաֆսանջանին հող է պատրաստում, որպեսզի անհրաժեշտության դեպքում զոհ տա Վելայաթիին, ընկերակցելով Խամենեիի եւ Մոհթաշամիի կողմնակիցների ճնշման առաջ, երկրի արտաքին քաղաքական կուրսի ձեւավորման իրավունքի համար սրված պայքարում:

Հեռագայում հնարավոր է հետեւյալ փոխզիջումը Իրանի քաղաքականության երկու միտումների միջեւ. պրագմատիկ տեխնոկրատները առավել ազատություն են ստանում զարգացնելու կապերը Եւրոպայի եւ Ճապոնիայի հետ՝ արտասահմանյան ներդրումներ գրավելու եւ նավթի ու գազի արդյունաբերությունը արդիականացնելու նպատակով: Դրա փոխարեն «իսլամական հեղափոխության» ջատագովներն ուժեղացնում են վերահսկողությունը հյուսիսային հարեւանների՝ Ադրբեջանի եւ Միջին Ասիայի պետությունների հետ հարաբերություններում, որոնք կարծիքներ են առաջացնում առավել մեծ հետաքրքրություն են առաջացնում որպես գաղափարական ծավալման ոլորտներ, քան տնտեսական համագործակցության գոտի:

Սակայն, եթե այդպիսի դրություն ծագի, ապա աշխարհն անտարբեր չի մնա այդքան լայն շրջանում որպես առաջատար ուժ հաստատվելու Իրանի փորձերի նկատմամբ: Այդ դեպքում Մերձավոր Արեւելքի վրա ազդելու համար պայքարում նոր շրջադարձ կառաջանա:

Հ. Լ.

digitised by A.R.A.R.@

Cumhuriyet

«Ցեղասպանությունը համայն հայության խնդիրն է»

ասում է նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը

«Ջումհուրիյեթ»ի սեփական թղթակից Ֆաթիհ Յըլմազը, վերջերս ժամանելով Երեւան, հարցազրույց էր ունեցել նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ եւ այն հրապարակել թերթի մարտի 20-26-ի շաբաթական համարում: Հարցազրույցի ընթացքում շոշափվում են հայ-թուրքական փոխհարաբերությունների հետագա ընթացքի, Հայ Դատից հրաժարվելու վերաբերյալ Անկարայի կողմից Հայաստանին ներկայացվող պահանջի, նախագահ Թուրգուտ Օզալի ու վարչապետ Սուլեյման Դեմիրելին պաշտոնական այցով Երեւան հրավիրելու, դարաբաղյան ծրագծի կարգավորման գործում արտգործնախարար Հիմմեթ Չեթինը, պատասխանելով Օզալին, ասում է՝ «Իսկ եթե չվախենա՞ն», սակայն Թուրքիայում լայնորեն ենթադրվում է Ադրբեջանին ռազմական օգնություն ցույց տալու հնարավորությունները: Անկարան Երեւան է ճիրծուղում Մոսկվայում Թուրքիայի դեսպան Վոլֆան Վուրալին եւ նրա միջոցով, ինչպես այդ մասին նշում է Օզֆյոֆը, «դիվանագիտական զուսպ ոճով նախազգուշացնում է հայերին»:

Այդ առումով բավականին անհասկանալի է թվում թուրք լրագրողի հարցերին պատասխանող Լեւոն Տեր-Պետրոսյանի՝ Օզալի հետ հանդիպելու պատրաստակամությունը: Ի դեպ, եթե Օզալը հանդիպելու ցանկություն ունենար, հանդես չէր գա այդպիսի անփառունակ արտահայտությամբ: Առնվազն անհասկանալի է նաեւ դարաբաղյան կոնֆլիկտում Թուրքիայի միջամտությունն ընդունելու պատրաստակամությունը եւս: Հատկանշական է, որ Թուրքիայի միջնորդությանը դրական վերաբերմունք ցույց տալով՝ Տեր-Պետրոսյանը հարցազրույցում այնուհետեւ կարծիք է հայտնում, թե ցանկալի չէր կոնֆլիկտի փոխադրումը միջազգային ֆորումներ: Եթե դա այդպես է, ապա Հայաստանը պետք է արտահայտի իր բացասական վերաբերմունքը ԵԱՀԽ-ի կողմից փետրվարի 28-ին դարաբաղյան կոնֆլիկտի առնչությամբ ընդունված բանաձեւի առթիվ: Իմիջիայլոց, այդ գործում Թուրքիան մեծ դեր է կատարել եւ այն երկրում իրավացիորեն համարվում է թուրքական դիվանագիտության հաջողությունը, քանի որ, ըստ բանաձեւի, Դարաբաղը համարվում է ադրբեջանական տարածք: Բացի այդ, Թուրքիային հաջողվում է դարաբաղյան հարցում իր տեսակետների պաշտպանության համար ստանալ, ըստ թուրքական մամուլի, հայերի ցանկություններին տուրք տվող Ֆրանսիայի եւ ԱՄՆ-ի աջակցությունը: Ընդ որում, գա տեղի էր ունենում այնպիսի մի ժամանակահատվածում, երբ այդ երկու երկրներում նախատեսվում են ընտրություններ, որոնք նախորդ տարիներին Մեծ Եղեռնի միջազգային ճանաչման հարցում սփյուռքին ընձեռնված հնարավորությունների առնչությամբ մեծ գլխացավանքներ էին պատճառել Անկարային: Եթե ԵԱՀԽ-ի բանաձեւը թուրքական դիվանագիտության հաջողությունն է, ապա պետք է համաձայնել, որ հայկական քաղաքականության մեջ Թուրքիայի կըտրուկ շրջադարձը մեր դիվանագիտության անհաջողությունն է, պայմանավորված ազգային հարցերում ճշգրիտ քաղաքական ծրագրերի բացակայությամբ:

Համենայն դեպս, «Ջումհուրիյեթ»ի անցկացրած հարցազրույցը նախագահ Տեր-Պետրոսյանի հետ, եթե նկատի ունենանք Թուրքիայում լայն տարածում գտած հակահայկական հիստերիան, ոչ միայն պատասխանների, այլեւ թղթակցի հարցադրումների առումով չափազանց մեծ հետաքրքրություն է պարունակում, միաժամանակ որոշակի պատկերացում է տալիս Հայաստանի թուրքական քաղաքականության ընթացքի մասին:

Հ. Հ.

Թուրքիայի միջնորդության հետ կապված բազմաթիվ հարցեր, որոնք կարեւոր նշանակություն ունեն ինչպես հայ-թուրքական հարաբերությունների, այնպես էլ արցախյան հիմնահարցի համար:

Սակայն, մինչ հարցազրույցը, մենք ցանկանում ենք ընթերցողի ուշադրությունը հրավիրել մի հանգամանքի վրա. դա դիվանագիտական հարաբերություններ հաստատելու համար պահանջատիրությունն ու 1915-ի ցեղասպանության միջազգային ճանաչումը, օրակարգից հանելու վերաբերյալ Հայաստանից գրավոր երաշխիք պահանջելու Անկարայի նախապայմանն է: Պատասխանելով թղթակցի հարցին, Լ. Տեր-Պետրոսյանը նախ անընդունելի է համարում նախապայմանը, ապա ասում, թե Հայաստանը ոչ մի հարեւանից հողային պահանջ չունի, այդ թվում նաեւ Թուրքիայից: Մինչդեռ, ընդամենը մի քանի ամիս առաջ, Հայաստանի հետ փոխհարաբերությունների սկզբնավորման համար որեւէ նախապայմանի անհամատեղելիության մասին Անկարան ինքն էր խոսում: Մեջլիսի վերջին ընտրությունների հետեւանքով իշխանությունը հանձնելով վարչապետ Սուլեյման Դեմիրելին, Մեսութ Յըլմազը Թուրքիայի համար անհեռանկարելի խնդիրների թվում մատնանշում էր Հայաստանի հետ փոխհարաբերությունների հաստատումը: Դեկտեմբերի 7-ի ելույթում նա նոր կառավարությանը կոչ էր անում «Շուտափույթ փոխհարաբերություններ հաստատել Թուրքիայի համար յուրահատուկ նշանակություն ունեցող Հայաստանի հետ, անհապաղ բացել Մարգարայի կամուրջը եւ ստորագրել տնտեսական համագործակցության պայմանագիր, որպեսզի կատեգվի հայկական գործոնի օգտագործման ամեն մի հնարավորություն»:

Չնայած Ադրբեջանի անընդմեջ դժգոհությանն ու տրտունջներին, Հայաստանի հետ անհապաղ փոխհարաբերությունների հաստատումը Թուրքիայի ազգային շահերի տեսանկյունից Դեմիրելը նույնպես դիտում էր որպես անհրաժեշտություն: Ավելին, ինքը՝ Դեմիրելը անընդունելի էր համարել ԼՂՄ-ի կարգավիճակի վերացման մասին Ադրբեջանի Գերագույն խորհրդի որոշումը եւ այդ առթիվ նախազգուշացնում էր Բաքվի ղեկավարությանը՝ խոհեմության կոչելով նրան: Այլ կերպ ասած, Թուրքիան Ադրբեջանի զայրույթը վաստակելու գնով արտաքին քաղաքականության մեջ չափազանց մեծ տեղ էր հատկացնում Հայաստանին, որն իր արտահայտությունն էր գտել «Հյուրրիյեթ»ի քաղաքական մեկնաբան Էրթուղրուլ Օզֆյոֆի հետեւյալ խոսքերում. «Թեեւ ազերիները մեր եղբայրներն են, սակայն նրանք չպետք է խոչընդոտ հանդիսանան Թուրքիայի ազգային քաղաքականության իրականացման ճանապարհին»:

Դա երեկ էր: Այսօր Թուրքիան ընդամենը մի քանի ամսվա ընթացքում շրջադարձ կատարելով, ամբողջությամբ թեքվել է Ադրբեջանի կողմը, ոչ միայն սառեցրել է անհետաձգելի համարվող դիվանագիտական հարաբերությունների հաստատումը Հայաստանի հետ, այլեւ ախխարհով մեկ հակահայկական հիստերիա է բարձրացնում: Ընդ որում, նախագահ Թուրգուտ Օզալը «հայերին մի փոքր վախեցնելու» առաջարկ է անում կառավարությանը, իսկ Սուլեյման Դեմիրելն իր հերթին մեզ «բշնամիներ» է համարում: Թեեւ

ԹԱԹԻՀ ՅԸԼՄԱԶ. – Դիվանագիտական հարաբերություններ հաստատելու համար Անկարան Հայաստանից պահանջում է գրավոր երաշխիք պահանջատիրությունից հրաժարվելու, ցեղասպանության հարցը այսուհետեւ օրակարգից հանելու մասին: Դուք մտադրություն չունե՞ք տալ այդ երաշխիքը եւ ընթացք հաղորդել դիվանագիտական հարաբերություններին:

Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ.– Դիվանագիտական հարաբերությունների սկզբնավորման համար որեւէ նախապայմանի պահանջով ինձ պատրաստ չեն դիմել: Մենք ցանկանում ենք Թուրքիայի հետ փոխհարաբերությունները զարգացնել, դրանով հանդերձ որպես ՄԱԿ-ի եւ ԵԱՀԽ-ի անդամ երկրներ, փոխհարաբերությունների հաստատման ճանապարհին ոչ մի նախապայման չենք ընդունում: Հայաստանը, անդամակցելով ՄԱԿ-ին եւ ԵԱՀԽ-ին, արդեն այդ ուղղությամբ ստանձնել է որոշակի պարտավորություններ: Այդ իսկ պատճառով առանձին երաշխիքի պարտավորություն չկա: Պատրաստ ենք Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատել: Տվյալ դեպքում ես կողմերի համար ոչնչ ընդունելի առաջարկներ: Դրանք են. հարաբերությունները նախ ձեւավորել տնտեսական եւ մշակույթի ոլորտներում, արդա անդրադառնալ քաղաքական խնդիրներին: Առանց տնտեսական քաղաքական ասպարեզում որեւէ հաջողություն ակնկալելն անիմաստ է:

Ֆ.Յ.– Հայաստանի 1990 թվականի օգոստոսի հռչակագրում տեղ է գտել «Արեւմտյան Հայաստան» արտահայտությունը: Չեզ չի՞ թվում, որ դրանով պահանջատիրությունն ինքնին օրակարգ է մտնում:

Լ.Տ-Պ.– Հռչակագիրն ընդունվել է նախքան ԽՍՀՄ-ի կազմալուծումը, եւ Հայաստանը այն ժամանակ դեռ չէր անդամակցել ոչ ԵԱՀԽ-ին, ոչ էլ ՄԱԿ-ին: Ներկայումս մենք ճշգրտում ենք անկախության շրջանակները: Սակայն ԵԱՀԽ-ի սկզբունքներով, որոնք մենք հարգում ենք, այդ արտահայտությունն ինքնին օրակարգից դուրս է հանվում: Պարզորոշ ասեմ, որ մենք հավատարիմ ենք սահմանների անձեռնմխելիության սկզբունքներին եւ մեկ այլ պետության որեւէ տարածքի վրա աչք չունենք: Հայաստանը հարեւաններից հողային պահանջ չունի եւ դա վերաբերում է թե՛ Թուրքիային եւ թե Վրաստանին ու Ադրբեջանին: Չեմ կարողանում հասկանալ Թուրքիայի մտավախությունների՝ իմաստը: Ինչպես Թուրքիայում, այնպես էլ Հայաստանում հնարավոր է հողային պահանջ ներկայացնելու ցանկությունների առկայությունը այս կամ այն քաղաքական շրջանակներում: Սակայն, ներկա պայմաններում նման պահանջները, բացի երազանքից, որեւէ այլ նշանակություն ունենալ չեն կարող:

Ֆ. Յ.– Ցեղասպանության հարցի արծարծումից Թուրքիան խիստ անհանգստանում է: Իսկ Հայաստանի նոր իշխանությունները հարցը օրակարգում պահելու նախանշաններ են տալիս:

Լ.Տ-Պ.– Ցեղասպանությունը ոչ թե Հայաստանի իշխանությունների, այլ ողջ հայ ժողովրդի խնդիրն է, եւ դա անտեսելը չափազանց դժվար է: Ցանկացած նահանջ այդ խնդրում կնշանակի, որ հայությունը ամբողջությամբ դեմ դուրս կգա իշխանություններին: Հետեւաբար, հնարավոր չէ մոռացության տալ ցեղասպանությունը: Որեւէ հայից չի կարելի ակնկալել, որ նա ասի, թե «ես պատրաստ եմ ցեղասպանությունը մոռանալ»: Այդ ուղղությամբ դրական որոշակի տեղաշարժերի կարելի է հասնել միայն բարիդրացիական հարաբերությունների հաստատման, փոխադարձ անվտահության վերացման շնորհիվ: Հայաստանի իշխանությունները չեն ցանկանում, որ ցեղասպանությունը դիտվի որպես խոչընդոտ Թուրքիայի հետ փոխհարաբերությունների ճանապարհին:

Ֆ.Յ.– Ասում են, թե նախագահ Թուրգուտ Օզալին եւ վարչապետ Սուլեյման Դեմիրելին Երեւան եք հրավիրել. ի՞նչ կասեք:

Լ.Տ-Պ.– Պաշտոնապես հրավեր չեմ տվել: Պարզապես արտահայտվել եմ փոխադարձ այցերի օգտավետության մասին: Արդեն Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ արտգործնախարարների, վարչապետների եւ նախարարների հանդիպման վերաբերյալ որոշ քայլեր արվել են, սակայն Թուրքիայի բացասական դիրքորոշման պատճառով հնարավոր չեղավ իրականացնել հանդիպումները: Կարծում եմ, հանդիպումները ղեկավարությունների միջեւ օգտակար կլինեն եւ անհրաժեշտ կողմերի հարաբերությունները զարգացնելու համար: Իմ խորին համոզմամբ դրանց հետաձգումը անիմաստ է:

Ֆ.Յ. – Ղարաբաղյան կոնֆլիկտը ի՞նչ դեր ունի մեր փոխհարաբերությունների սառեցման գործում:

Լ.Տ-Պ.– Վերջին շրջանում Թուրքիան Ղարաբաղի առնչությամբ կողմնակալ մոտեցում է դրսեւորում, չնայած դրան, մենք արտահայտվում ենք Թուրքիայի հետ փոխհարաբերությունների զարգացման օգտին: Չնայած մեր կողմից կոնֆլիկտի կարգավորման հարցում Թուրքիայի եւ այլ երկրների միջնորդությանն աջակցելու վերաբերյալ արված հայտարարություններին, Թուրքիան մինչեւ օրս պաշտոնական առաջարկ չի արել: Եթե մեզ դիմեր, ապա կընդունենք առաջարկը: Իրականում մենք գտնում ենք, որ Ղարաբաղի խնդիրը ինքնարկման համար պետք է փոխադրվի միջազգային ֆորումներ: Կոնֆլիկտը շրջանային բնույթ է կրում եւ այն պետք է լուծում գտնի Ադրբեջանի ու Ղարաբաղի իշխանությունների միջեւ: Պատրաստ ենք ընդունել Ադրբեջանի եւ Ղարաբաղի իշխանությունների ցանկացած որոշումը:

Ֆ.Յ.– ԵԱՀԽ-ի բանաձեւի համաձայն, Ղարաբաղը համարվում է ադրբեջանական տարածք, իսկ մարզի հայությունը դիտվում է որպես ազգային փոքրամասնություն: Բանաձեւի ձեր գնահատականը:

Լ.Տ-Պ. – Ես դրան չեմ առարկում, սակայն չպետք է աչքաթող անել նաեւ Ղարաբաղի ինքնորոշման իրավունքը: ԵԱՀԽ-ի բանաձեւը չի նախատեսում, որ Ղարաբաղը ինքնորոշվելու իրավունք չունի: Հայաստանը Ղարաբաղի առնչությամբ հողային որեւէ պահանջ չի ներկայացնում եւ դա ձեզ հստակ ասում են: Մենք գտնում ենք, որ կոնֆլիկտը լավագույն ձեւով լուծելու համար անհրաժեշտ է հարգել Ղարաբաղի բնակչության ցանկությունները: ■

Անցած-դարձածից

Ռուսիային սպառնում են

Ռուսաստանի արտգործնախարարի տեղակալ Ֆյոդոր Շելով-Կովեդյաեւը գտնում է, որ Ռուսաստանի ազգային շահերին եւ անվտանգությանն ավելի շատ սպառնում են նախկին ԽՍՀՄ-ի հանրապետությունները, քան ավանդական թշնամիները: Ելույթ ունենալով ԱՊՀ-ի հեռանկարների մասին մարտի 30-ին կայացած խորհրդարանական լսումների ժամանակ, նա իրավիճակը այդ հանրապետություններում որակեց որպես «չափազանց անկայուն»:

Փոխնախարարը հայտարարեց, որ Հանրակցության պետությունները տարբեր կերպ են ընդունում ինտեգրացման գաղափարը ԱՊՀ-ի սահմաններում: Նրա կարծիքով, ԱՊՀ-ի երկրները հնարավոր է բաժանել երկու խմբի: Առաջին խումբ. Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Ուզբեկստան, Հայաստան, Տաջիկստան, որոնք ձգտում են ավելի սերտ ինտեգրացիոն հարաբերությունների: Երկրորդ խմբի՝ Ուկրաինայի, Մոլդովայի, Թուրքմենստանի, Ադրբեջանի մոտ համագործակցության ձգտումները շատ ավելի թույլ են: Ֆ. Շելով-Կովեդյաեւը կարծիք հայտնեց նաեւ, որ ինտեգրացիոն կապերի խախտումներն ավելի զգալի են այն հանրապետություններում, ուր ուժեղ են նախկին կոմունիստական համակարգի ներկայացուցիչների դիրքերը:

Ակաեւը թերահավատ է

Ղրղզստանի նախագահ Ասկար Ակաեւը թերահավատորեն է վերաբերվում ԱՊՀ-ի ղեկավարների մայիսի կեսերին Տաշքենդում կայանալիք հանդիպման հեռանկարներին: Նա հայտարարեց, որ «տնտեսական համագործակցության խնդիրները ԱՊՀ-ի սահմաններում լուծելու հույսերը չեն արդարացվել»: Նախագահը հասկացրեց, որ Ղրղզստանը ստիպված կլինի հույս դնել սեփական ուժերի վրա տնտեսական ճգնաժամից դուրս գալու համար: Նրա խոսքերով, ԱՊՀ-ի պետությունների ղեկավարները չկարողացան ընդունել «ոչ մի համաձայնեցված որոշում» Կիեւում կայացած վերջին հանդիպման ժամանակ: ■

«Միջուկային հոսք չկա»

Ռուսաստանի անվտանգության նախարարությունը կտրականապես հերքեց բոլոր հաղորդագրությունները այն մասին, թե Ռուսաստանից դուրս են հանվում միջուկային տեխնոլոգիաներ, իսկ այդ ասպարեզում աշխատող գիտնականները հեռանում են հանրապետությունից: Մարտի 30-ին Մոսկվայում կայացած բրիֆինգում նախարարության մամուլի քարտուղարը հայտարարեց, որ իրազեկ մարմինները այդպիսի փաստեր չունեն:

Ռուսաստանի Գերագույն խորհրդի կոնվերսիայի հարցերով զբաղվող պետական կոմիտեի նախագահ Միխայիլ Բաժանովի խոսքերով, Արզամաս-16 եւ Չելյաբինսկ-70 քաղաքների միջուկային օբյեկտներում աշխատում է գիտնականների նեղ շրջանակ, որոնք նույնիսկ չեն դիմել արտասահման մեկնելու խնդրանքով: Նա հայտարարեց, որ միջուկային զենք պատրաստելու համար պիտանի պլուտոնի եւ ուրանի 100 տոկոսն արտադրվում է Ռուսաստանում: ■

Իտալիայի նախագահը Մոսկվայում

Ինչպես հայտնի է, պաշտոնական այցով Մոսկվայում է գտնվում Իտալիայի նախագահ Ֆրանչեսկո Կոսիգան: Մարտի 30-ին տեղի ունեցած մամուլի ասուլիսում նախագահը նշեց, որ Ռուսաստանի նախագահ Բ. Ելցինի հետ բանակցությունների ժամանակ քննարկվել են երկկողմանի համագործակցության հարցերը, ինչպես նաեւ իրավիճակը ԱՊՀ-ում, Ռուսաստանի եւ Ուկրաինայի միջեւ հարաբերությունները, դարաբաղյան հիմնահարցը, Հարավսլավիայում ստեղծված իրավիճակը, Մեծավոր Արեւելքի կոնֆլիկտի կարգավորման խնդիրները եւ Լիբիայի հարցը: Ֆրանչեսկո Կոսիգայի խոսքերով, Բ. Ելցինը կողմ է, որ Ռուսաստանը ներգրավվի բոլոր եւրոպական կազմակերպություններում, ներառյալ եւ ՆԱՏՕ-ն:

Մամուլի ասուլիսին մասնակցեց նաեւ Իտալիայի արտգործնախարար Ջանկարլո դե Միկելիսը: Նա նշեց, որ Ռուսաստանի արտաքին գործերի եւ տնտեսության նախարարների հետ բանակցությունների ժամանակ քննարկվել են ռուսաստանյան տնտեսության վերակազմման հետ կապված հարցերը: Մասնավորապես, Իտալիան նախատեսում է վարկեր տրամադրել Ռուսաստանին. 160 միլիոն դոլար որպես առեւտրական վարկ, եւ 440 միլիոն դոլար արդյունաբերական նախագծերի իրականացման համար:

Մամուլի ասուլիսում նշվեց նաեւ, որ Իտալիայի նախագահ Ֆրանչեսկո Կոսիգան կլինի առաջին արեւմտյան ղեկավարը, որ կայցելի Կրոնշտադտի ռազմածովային բազան եւ Արզամաս-16 միջուկային կենտրոնը: Այդ հրավերը նա ստացել է անձամբ Բ. Ելցինից: ■

digitised by A.R.A.R.@

Դիվանագիտական խաղեր Մակեդոնիայի անկախության ճանաչման շուրջ

Դեռ չեն հանդարտվել Սլովենիայի ու Խորվաթիայի անկախության ճանաչման հետ կապված կրքերը, երբ օրակարգի մեջ մտցվեց եւս երկու նախկին հարավսլավական հանրապետությունների՝ Բոսնիայի ու Հերցեգովինայի եւ Մակեդոնիայի անկախության ճանաչման հարցը: Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ ինչ-որ ուժերի ձեռքին է Բալկանների անընդհատ լարված վիճակում մնալը, Հարավսլավիայի կտոր-կտոր անելու գործընթացը: Եւ եթե Սլովենիայի եւ Խորվաթիայի ճանաչումը դեռ բացատրելի էր (սլովեններն ու խորվաթները Հարավսլավիա ստեղծող երեք ժողովուրդներից էին), ապա Մակեդոնիայի եւ առավել եւս Բոսնիայի ու Հերցեգովինայի դարագաներում ամեն ինչ շատ ավելի բարդ է:

գեսության ալբանական փոքրամասնությունը: Այդ փոքրամասնությունն այնքան էլ փոքր չէ: Ալբանացիները, ըստ տարբեր տվյալների, կազմում են Մակեդոնիայի բնակչության 30-40 տոկոսը, ընդ որում, նրա արեւմտյան մասում բացարձակ մեծամասնություն են: Հանրաքվեից մեկուկես ամիս հետո ալբանացիները մասնակցեցին արդեն իրենց սեփական հանրաքվեին, որն ամրագրեց ալբանացի ազգաբնակչության կամքը՝ ապրել Մակեդոնիայից անկախ: Հիրավի, ինչ-որ ցանես, այն կհնձես:

Մակեդոնացիք փորեցին մի խոր, անհաղթահարելի խրամատ Բուլգարիայի, Սերբիայի, Հունաստանի եւ Ալբանիայի փոխհարաբերությունների միջեւ՝ մուտք բացելով բուրգական նվաճողական ծրագրերի համար դեպի Բալկանյան թերակղզու սիրտը: Մակեդոնիան բուրգական վերջին պատվարն էր Եւրոպական Թուրքիայում: 19-րդ դարի վերջին 20-րդ դարի սկզբին մակեդոնական եւ հայկական հարցերը մեկ անգամ չէ, որ կողք-կողքի էին դրվել: Մակեդոնիան ազատագրվեց Թուրքիայից բալկանյան պատերազմների հետեւանքով, սակայն Պոլսի դարպասներին հասած բալկանյան միությունը սայթաքեց Մակեդոնիայի բաժանման հարցի վրա: Միությունը քայքայվեց, սկսվեց միջբալկանյան պատերազմ, որում երեկվա բռնամի Թուրքիան դարձավ Բուլգարիայի դաշնակիցը: Արդյունքում Մակեդոնիայի մասնատում եւ Հարավ-արեւելյան Թրակիայի կորուստ: Մենք հաճախ ենք խոսում Անդրկովկասում մեր օրերում կատարվող դեպքերի եւ հեղափոխական իրադարձությունների աղետագիր նմանության մասին: Պետք է ասել, որ նույն աղետագիր նմանությունը, ընդ որում, ամեն անգամ ավելի ու ավելի վտանգավոր, մենք դիտում ենք նաեւ Բալկաններում: Այդպես էր եւ Առաջին, եւ Երկրորդ համաշխարհային պատերազմների նախաշեմին...

Այն Մակեդոնիան, որն այսօր հավակնում է անկախ պետություն դառնալ, այդպիսին երբեք չի եղել: Հարավսլավիայի կազմավորումից առաջ այն Սերբական թագավորության մի մասն էր եւ, ըստ երեւույթին, կմնար նույն վիճակում, եթե սերբերն այդքան եռանդով չհրաժարվեին իրենց պետականությունից հանուն Հարավսլավիայի ստեղծման: Առաջին անգամ մակեդոնացիները որպես ինքնուրույն ազգ ճանաչվեցին Տիտոյի օրոք: Սերբերը դա դիտում են որպես կոմունիստական բռնակալի Սերբիան եւ սերբ ժողովրդին բուլացնելու նպատակասլաց ծրագրի դրսեւորումներից մեկը: Բուլգարիան մակեդոնացիներին երբեք չէր ճանաչում որպես առանձին ազգ՝ համարելով նրանց «մաքուր բուլգարներ»: Սակայն Մակեդոնիայի անկախությունն առաջինը ճանաչեց հենց Բուլգարիան, որը փորձում է այդպիսով իրականացնել «բուլգարական ժողովրդի օրրանը» իրեն միացնելու եւ «Մեծ Սան-Ստեֆանյան» Բուլգարիա ստեղծելու իր վաղեմի երազները: Ճիշտ է, բուլգարները դեռ միայն խոսում են Մակեդոնիայի հետ սերտ հարաբերությունների, սահմանները «ձեւական» դարձնելու մասին, սակայն արդեն լսվում են երկու բուլգարական պետությունների վերաբերյալ կարգախոսներ, որոնց հետեւելու է նրանց միացման «բնական» պահանջը: Հունաստանն ընդհանրապես չի ընդունում որեւէ մակեդոնական սլավոնական փոքրամասնության առկայությունը Էգեյան Մակեդոնիայում, իսկ նախկին Մակեդոնիայի Սոցիալիստական Հանրապետության անկախության մեջ տեսնում է իր ազգային անվտանգության եւ տարածքային ամբողջականության սպառնալիք: Այսպիսով, մակեդոնյան հանգույցն ավելի ամուր է ձգվում ծայր աստիճան ՝էիկացնելով Բալկանյան թերակղզու առանց այն էլ լարված իրավիճակը:

Զարմանալի չէ, որ Բուլգարիայի օրինակին անմիջապես հետեւեց Թուրքիան, որը մինչ այդ բարձրաձայն հայտարարում էր Հարավսլավիայի տարածքային ամբողջականության եւ Բալկաններում *ստատս քվոն* պահպանելու իր հաստատ վճռականության մասին: Մակեդոնիան Թուրքիային պետք է որպես բալկանյան պետություններին եւ, առաջին հերթին, Հունաստանին հակակշիռ: Առանձին ուշադրության են արժանի Մակեդոնիայի անկախության ճանաչման այն փաստարկները, որոնք բերեց Թուրքիայի վարչապետ Դեմիրելը Հունաստանի նախագահ Միցոտակիսի հետ հանդիպման ժամանակ: Դեմիրելը Դավոսում շատ անկեղծորեն ասաց. *«Մենք կճանաչենք Մակեդոնիան, դուք էլ ճանաչեք: Մակեդոնիան ձեր հարեւանն է, եւ դա օգտակար կլինի ձեզ համար»*: Իսկ Թուրքիայի արտաքին գործերի նախարար Հիքմեթ Չեթինը հարցազրույցներից մեկում պարզաբանեց, որ Մակեդոնիայի ճանաչումը, պարզվում է, կապված է նաեւ այնտեղ բնակվող 150 հազար բուրքերի հետ: Վերջին հայտարարությունն առանձնապես հետաքրքրական է: Բանն այն է, որ էթնիկական բուրքերի այդպիսի խնդիր ընդհանրապես չկա նախկին Հարավսլավիայի ամբողջ տարածքում: Եթե նույնիսկ բուրքերի շարքը դասենք նաեւ բոլոր մահմեդական սլավոն-մակեդոնացիներին, ապա նույնիսկ այդ դեպքում նրված թիվը չափազանցված կլինի առնվազն հինգ անգամ: Սակայն այդ ո՞ւմ նկատի ուներ Հիքմեթ Չեթինը: Գուցե մահմեդական ալբանացիների՞ն, կամ էլ գուցե բուրքերի բանակն ընդհանրապես ոչ մի նշանակություն չունի՞, երբ խոսքը գնում է Թուրքիայի նվաճողական նեոօսմանյան նկրտումների մասին:

Հունաստանը եռանդուն քաղաքականություն է վարում, որպեսզի Եւրոպան չճանաչի Մակեդոնիայի անկախությունը: Որոշ ժամանակ, Հունաստանում նույնիսկ արգելված էր հոլանդական եւ իտալական ապրանքների վաճառքը, քանի որ Հոլանդիան եւ Իտալիան Եւրոպական համայնքի առաջին երկրներն էին, որոնք ճանաչեցին Մակեդոնիայի եւ Բոսնիայի ու Հերցեգովինայի անկախությունը: Հունաստանն այդ

Ապարտեիդի դարաշրջանի վերջը

Նելսոն Մանդելա

Ֆրեդերիկ դե Քլերկ

Հարավ-Աֆրիկյան հանրապետությունում ոչ ոք չէր սպասում ապարտեիդի ջախջախիչ պարտության. ՀԱՀ ընտրություններին մասնակցած սպիտակամորթ բնակչության 68,7 տոկոսը «այո» պատասխանեց երկրի նորացման ընթացքին:

Նախագահ դե Քլերկը՝ հարավաֆրիկյան ռեֆորմատորը, շնորհավորանքներ է ստանում աշխարհի քաղաքական առաջնորդներից. ԱՄՆ-ից մինչեւ Ավստրալիա եւ Ճապոնիա, Գերմանիայից Զամբիա: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալին իր հայտարարության մեջ նշում է, որ բացված հեռանկարները նոր գործոն կդառնան ամբողջ աֆրիկյան մայրցամաքում խաղաղության հաստատման եւ այն զարգացնելու ջանքերում: Աֆրիկյան միասնության կազմակերպության գլխավոր քարտուղար Ամեդ Սալիմը կոչ արեց երկրի բոլոր քաղաքական ուժերին եւ հանգցնել ֆանատիկ վերափոխումներին վտանգող գործողություններից:

Երկու տարի առաջ Քլերկի սկսած վերափոխումների ընթացքն այսօր հավելյալ խթան է տացել: Այսօր, ինչպես իր շնորհավորական հեռագրի մեջ նշում է Ֆրանսիայի վարչապետ Էդիթ Կրեսոնը, պետք է արժանին մատուցել Հարավային Աֆրիկայի երկու գործիչներին նախագահ Ֆրեդերիկ դե Քլերկին եւ Աֆրիկյան ազգային կոնգրեսի առաջնորդ Նելսոն Մանդելային: Իրենց խիզախության շնորհիվ նրանք կարողացան ամեն ինչ անել, որպեսզի Հարավային Աֆրիկայի տարազան համայնքները միասնական ժողովուրդ դառնան՝ հենվելով քաղաքական կուսակցությունների հավասարության եւ սոցիալական համախմբվածության վրա: Հաջորդ քայլը կլինի նոր սահմանադրության մշակումը:

Հանրաքվեին նախորդած եռաբաթյա քարոզչական արշավի վերջում դե Քլերկն ընդգծեց, սպիտակամորթների տիրապետությանը պետք է վերջ տալ, սակայն սեւամորթների տիրապետությունը նույնպես անհանդուրժելի է:

Քվեարկությունների նախօրյակին բարեփոխումների դեմ հանդես եկող 32 քաղաքական կազմակերպություն կազմեցին միասնական *«հանրաքվեին հակազդող սպիտակ ճակատ»*-ը: Ինչպես հայտարարեց ճակատի ներկայացուցիչներից մեկը, այդ փաստը վկայում է *«բանակի չտրվելու սպիտակամորթների անդրդվելի կամքի մասին»*: Ազգայնականները Հարավային Աֆրիկայի կոմկուսին ու նրա դաշնակիցներին մեղադրեցին նացիզմի եւ ֆաշիզմի մեջ. նրանց նախընտրական պատասխանների վրա նկարված էր պատերազմական, որին հետեւում է *«Հարյուրամյա վերջ տվի արյան, որտեղ եղավ վերջապես պատերազմ եւ 45 միլիոն զոհ»*:

Կարելի է երկյուղ կրել, որ աֆրիկյան մեծամասնությանը բոլոր քաղաքական իրավունքներ ընձայող բարեփոխումների հակառակորդները կվերախմբավորեն իրենց ուժերը հույսը դնելով առաջին հերթին բռնության եւ քաղաքական անհաբեկչության վրա: Նախընտրական պայքարն արդեն նեգրական գետնոներում 280 կյանք խլեց: Հետազոտողները վախեցնում էին, թե եթե մեծամասնությունը քվեարկի հօգուտ բարեփոխումների, Հարավային Աֆրիկան կհայտնվի կոմունիստների կրունկի տակ:

Այս մռայլ գուշակումները դեռեւս չեն իրականացել: Դանիան, Նորվեգիան եւ Ճապոնիան հանրաքվեների արդյունքների հրապարակման տառացիորեն հենց հաջորդ օրը հայտնեցին իրենց մտադրությունը չեղյալ հայտարարել ՀԱՀ-ի դեմ բոլոր տնտեսական արգելքները:

Չեխոսլովակիա. Վհուկների որս

Հակակոմունիստների ընդունած «մաքրագործիչ» օրենքն առնչվում է մոտ մեկ միլիոն քաղաքացիների

Երբ 1989 թ. նոյեմբերին չեխ ժողովուրդը պահանջում էր վրեժ լուծել նախկին կոմունիստներից, այլախոհ Վացլավ Հավելը պատասխանում էր. **«Մենք բոլորս ենք մեղավոր»**: Նա ժողովրդին աղաչում էր չկրկնել կոմունիստների 50-ական թվականների մաքրագործումները կամ «Պրագայի գարնանը» հաջորդած հալածանքները: Վենցեսլաս Հրաադարակում հավաքված, ազատությունից արբած ամբոխը արձագանքում էր. **«Մենք նրանց նման չենք»**:

Այսօր հրճվանքը տեղը զիջել է խաբվածության զգացմանը: «Թավշյա հեղափոխությանը» հաջորդել է «թավշյա դատարանը», մանրակրկիտ մի զննություն, որը արդարադատության ոգի տակ ծառայում է քաղաքական որոշ խմբերի շահերին: Դա նաեւ վկայում է հանրաքվեի նախագահի եւ նրա այլախոհ բարեկամների ազդեցության թուլացման մասին:

Ամեն ինչ սկսվեց 1990 թ. մայիսին կոմունիստների սեփականազրկումից: Դա օրինական, բայց բանկ եւ արդյունաբերություն գործողություն էր, քանզի մի քանի անվա ընդունությունից ընդամենը պարզվեց, որ արարչիկներն իրենց ունեցվածքին վաղուց օրինական տեսք էին տվել զանազան ողորկիչ ընկերությունների եւ մութ գործառնությունների միջոցով:

Ճնշումն ուժեղացավ անցյալ տարվա հոկտեմբերին: Պատճառաբանելով, թե «հին կառույցները» (իմա կոմունիստները) արգելակում են Ֆինանսների շահավետ Ֆեդերալ նախարար Վացլավ Կլաուսի ծեռնարկած տնտեսական բարեփոխումը, ծայրահեղ ազատական քաղաքական ժողովրդավարական կուսակցությունը (ՔԺԿ), որի նախագահն է Կլաուսը, Չեխիայի մյուս աջ կուսակցությունների օգնությամբ արշավ սկսեց այդ անհավասներից ազատվելու նպատակով: Այդ կուսակցություններն ընդունեցին այսպես կոչված «Լուսրացե» օրենքը, որով նախատեսվում է հինգ տարում պետական պաշտոններից հեռացնել բոլոր նրանց, ովքեր աշխատակցել են խորհրդային ՊԱԿ-ից պատճենված չեխոսլովակյան գաղտնի ոստիկանությանը, ինչպես նաեւ պաշտոնանկ անել՝ կոմկուսի բարձրաստիճան ներկայացուցիչներին: Դա անհրաժեշտ եւ արդար օրենք է, սակայն տարածվում է նաեւ այն անձանց վրա, ովքեր պաշտոններ են զբաղեցրել պետական ծեռնարկություններում, համալսարաններում, փոստում, ժողովրդական միլիցիայում 1948 թ. փետրվարի 25-ից մինչեւ 1989 թ. նոյեմբերի 17-ը, այսինքն՝ կոմունիստների օրոք: Բացառություն է նախատեսված այն կոմունիստ պաշտոնյաների համար, որոնք պաշտոններ են զբաղեցրել 1968 թ. հունվարի 1-ից («Պրագայի գարնան» սկիզբը) մինչեւ 1969 թ. մայիսի 1-ը («կարգավորման» սկիզբը):

Օրենքն առնչվում է շուրջ մեկ միլիոն քաղաքացիների: Տեսականորեն ամեն որ մեկ ամսում կարող է լավ վարձքի հավաստագիր խնդրել ներքին գործոց նախարարությունից: Կասկածելի անձինք հրաժեշտ կտան պաշտոններին: Այդուհանդերձ, օրենքի սահմանադրական լինելը կամ չլինելը դեռ հաստատված չէ, եւ ինչ-որ մեկը կարող էր գաղտնի ոստիկանության ցուցակներում հայտնվել՝ չլինելով դրա ակտիվ գործակիցը: Բայց իր անմեղությունն ապացուցելու համար «կասկածելին» պետք է անձամբ վերստուգիչ հանձնաժողով հրավիրի եւ հոգա դրա ծախսերը: Արդարության կանխավարկածը բացառվում է: Այդ պատճառով հաճախակի են դարձել զեղծարարության եւ կողմնակալ վերաբերմունքի փաստերը:

Բայց եթե օրենքը նույնիսկ ճշգրիտ կիրառվեր, դարձյալ դրա արդյունավետությունը կասկածելի կլիներ: Բանն այն է, որ նախկին ամբողջատիրական վարչակարգի իսկական պաշտպանները վաղուց անցել են մասնավոր սեփականության ոլորտ, որտեղ նրանք անձեռնմխելի են: Լավ մասնագետներից շատերը, որոնք կուսակցական էին դարձել ինչ-ինչ հավակնություններից ոգեւորված, հիմա նույն ուղին են բռնել: Նրանց ասիճանաբար փոխարինում են ուրիշներ, որոնց միակ արժանիքը «գաղափարախոսական հուսալիությունն» է: Վերջիններս հիմնականում ՔԺԿ-ի անդամներ են:

Չնայած կամայական բնույթին, օրենքը միայն թույլ ընդդիմություն կառաջացնի: Քանզի վհուկորսի դեմ (վհուկները կարող են անձամբ կասկածելի դառնալ): Ուստի նախկին այլախոհներն անգամ մեծ մասամբ ձեռնպահ են մնում: Նույնիսկ նախագահ Հավելը որոշ վերապահումներից հետո ի վերջո դրեց իր ստորագրությունը: Միայն «Պրագայի գարնան» հերոսը՝ Ֆեդերալ ժողովի ներկայիս նախագահ Ալեքսանդր Դուբչեկը չհամակերպվեց, ասելով, որ **«հեղափոխությունն սկսել է հոշոտել իր իսկ զավակներին»**:

Մնում է պարզել, թե մաքրագործիչ այս դիմակահանդեսը իրո՞ւէ **«ժողովրդավարության միակ ճշմարիտ ուղին է»**, ինչպես դա պնդում է շատ ազդեցիկ հակակոմունիստական լիգան:

«Le Point», 20 մարտ 1992

digitised by A.R.A.R.@

Հեղինակավոր կազմակերպության կոչը

Վաղուց արդեն Արցախյան խնդիրը դուրս է եկել երջանի սահմաններից եւ միջազգային հնչեղություն ստացել: Ջինադարարի մասին համաձայնագրերը ոչ միայն չեն գործում, այլեւ պատերազմն օրեցօր ավելի է ծավալվում: Այդ պատճառով կարեւորվում են ոչ միայն միջազգային իրաղաղարար միջամտությունները, այլեւ մարդասիրական առաքելությունները:

Արդեն այս տարվա հունվարին Կարմիր խաչի միջազգային կոմիտեի պատվիրակները ժամանել էին Հայաստան եւ Ադրբեջան տեղում ծանոթանալու իրադրությանը: Մարտ ամսին կոմիտեն արդեն մշտական գործող գրասենյակներ ուներ Երեւանում, Բաքվում եւ Թբիլիսիում: Կոմիտեն, որը գործում է միայն միջազգային եւ ոչ միջազգային զինյալ բախումների, ինչպես նաեւ ներքին խռովությունների ժամանակ, փորձում է պաշտպանել աղեղյալներին հետեւյալ ձեւերով. նրա պատվիրակները այցելում են գերիներին, պատանդներին եւ բաղաքացիներին, ճնարակում նրանց նյութական եւ հոգեբանական պայմանները, փնտրում պատերազմի ժամանակ անհետացածներին, կարգ հաստատում նրանց եւ նրանց ընտանիքների միջեւ, կազմակերպում ընտանիքների վերամիավորումը, աղեղյալների համար կառուցում հիվանդանոցներ ու վերականգնողական կենտրոններ եւ այլն: Ընդ որում, կոմիտեի մարդասիրական աշխատանքների համար բացարձակ անկողմնակալությունն ու գաղտնապահությունը պարտադիր են:

Մարտի 18-ին Կարմիր խաչի միջազգային կոմիտեի երկու պատվիրակների հաջողվեց հասել ռազմաճակատի գիծը եւ Աղդամից ժամանել Ստեփանակերտ: Երկու պատվիրակները, որոնցից մեկը բժիշկ է, նպատակ ունեն Արցախում ստեղծել մշտական ներկայացուցչություն եւ մարդասիրական օգնություն ցույց տալ տեղի բնակչությանը: Մարտի 27-ին եւ 30-ին կոմիտեի պատվիրակներին հաջողվել է եւս 2 անգամ հասել ռազմաճակատի գիծը եւ որոշ բանակությամբ դեղորայք հասցնել Արցախ: Ստեփանակերտի եւ Բաքվի մշտական ներկայացուցչությունների հիմնական խնդիրն է տեղեկություններ հաղորդել ռազմագերիների վերաբերյալ, ինչպես նաեւ երկու կողմերին բացատրել Ժնեւյան համաձայնագրի էությունն ու Կարմիր խաչի միջազգային կոմիտեի նպատակները:

Վերջերս «Ազգ»-ի խմբագրություն եկավ կոմիտեի երեւանյան գրասենյակի ներկայացուցիչ Ժոել Կոմեն: Հանդիպման ներկայացնելով կոմիտեի նպատակներն ու արդեն կատարված աշխատանքները պատվիրակը նշեց դրանք բնակչության լայն խավերին ներկայացնելու անհրաժեշտությունը եւ կոչ արեց հակամարտ կողմերին դադարեցնել մարդասիրական սկզբունքները:

Մենք, իհարկե, սիրով միանում ենք այդ կոչին, հասկանալով, սակայն, որ այդ կոչն ավելի շատ ոչ թե մեզ, այլ մեր հակառակորդին է անհրաժեշտ:

ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Թուրքիան 100 միլիոն դոլլար է տրամադրում Նախիջեւանին

Թուրքիան 100 միլիոն դոլլարի վարկ կտրամադրի Նախիջեւանին: Այդ մասին արձանագրություն է ստորագրվել Նախիջեւանի Գերագույն մեջլիսի նախագահ Հեյդար Ալիեւի մարտի 22-ից 25-ը Թուրքիա կատարած այցի ժամանակ:

Փաստաթղթի համաձայն, հանրապետությունը կմիանա Թուրքիայի էներգետիկ համակարգին, կարագանան աշխատանքները ավտոմայրուղիների ու երկաթգծերի կառուցման եւ ավիահաղորդակցության կազմակերպման ուղղությամբ: Բացի այդ, նախատեսվում է կարգավորել թուրքական հառուստատեսության եւ ռադիոծրագրերի ընդունումը Նախիջեւանի տարածքում, ստեղծել ժամանակակից կապի միջոցների համակարգեր:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել, ըստ որի Թուրքիան կաղահովի Նախիջեւանը գյուղատնտեսական տեխնիկայով եւ մասնագետներով: Հանրապետության մայրաքաղաքում կբացվի նաեւ Թուրքիայի գյուղատնտեսական դրամատան բաժանմունքը:

Արձանագրության համաձայն, Թուրքիան կօգնի Նախիջեւանին տուրիզմի կազմակերպման, մասնավորապես, հյուրանոցների կառուցման գործում: Ամեն տարի Նախիջեւանից Թուրքիա սովորելու կմեկնեն 100 ուսանողներ: ■

Անգործների թիվը Ռուսաստանում կհասնի 11 միլիոնի

ՄԱԿ-ի Աշխատանքի միջազգային կազմակերպության տնօրեն Միշել Հանսենը Ժնեւից հայտարարեց, թե իր գլխավորած կազմակերպության վերջերս կատարած ուսումնասիրության համաձայն, մինչեւ ընթացիկ տարվա ավարտը Ռուսաստանում անգործների թիվը կհասնի 11 միլիոնի, ներկայիս 3 միլիոնի փոխարեն: Ըստ նրա, այդ թիվը կարող է հասնել անգամ 30 միլիոնի, եթե Ռուսաստանը որոշի վառելանյութի սակագները բարձրացնել միջազգային մակարդակի:

Աշխատանքի միջազգային կազմակերպության վերոնշյալ ուսումնասիրությունը հիմնված է Ռուսաստանում 500 ձեռնարկություններից ստացված տվյալների վրա: Համաձայն այդ ուսումնասիրության, գործազուրկների թիվը նախկին խորհրդային 12 հանրապետություններում ներկայիս 5 միլիոնից մինչեւ տարեվերջ հասնելու է 15 միլիոնի, 136 միլիոն աշխատավորների շարքերում, եթե մինչ այդ տնտեսությունը ավելի չվատթարանա: ■

Լուսերի Ռուսը

Շախրայը հրաժարական

Ռուսաստանյան կառավարության փոխվարչապետ Սերգեյ Շախրայը մարտի 30-ին նախագահ Ելցինի անունով հրաժարականի դիմում է ներկայացրել, հայտնեցին Շախրայի մամուլի ծառայությունում: Փոխվարչապետը դիմումի մեջ հետեւյալ պատճառաբանությունն է բերել. Ռուսաստանի ժողովրդավարների 6-րդ համագումարի նախօրյակին արդավ է ծավալվել կառավարության անդամների պատգամավորական լիազորությունները ժամկետից շուտ կասեցնելու համար: Ս. Շախրայը գտնում է, որ նախաձեռնողները չեն շարժվում «սրբազան պայքարի ճանապարհով օրենսդիր եւ գործադիր իշխանությունների սահմանազատման մարտության համար», նրանք ձգտում են ակտիվ խորհրդարանական աշխատանքից հեռացնել կառավարության անդամներին եւ «կրճատել նախագահի եւ բարեփոխումների կողմնակիցների ձայները»: ■

Կրյուչկովը սոսկ կատարող էր

Վլադիմիր Կրյուչկովի դատաքննությանը Յուրի Իվանովի խոսքերով, կես տարվա ամենօրյա ջփումները համոզել են նրան, որ պաշտպանյալը անսասան հաղթական հայացքների տեր է: Ինչպես գտնում է Իվանովը, այսօր ՊԱԿ-ի նախկին նախագահի դիրքորոշումը նման է Սերգեյ Բաքուրինի եւ Նիկոլայ Պավլովի դիրքորոշմանը: Դատաքննությանը պնդում է, որ բացի օգոստոսյան երկուերեք օրերից, Կրյուչկովն իր աշխատանքներում ղեկավարվում էր «միայն նախագահ Գորբաչովի հրամաններով»: ■

Լուկյանովը վատառողջ

Անատոլի Լուկյանովի դատաքննությունը դիմում է ներկայացրել դատախազություն, խնդրելով ազատ արձակել իր պաշտպանյալին՝ առողջական վիճակի վատթարացման պատճառով: Հենրիխ Պադվան հաղորդեց, որ կես տարվա կալանքի ընթացքում Լուկյանովն արդեն երրորդ անգամ գլխուղեղի անոթների կծկումներ է ունենում: Արդյունքում զգալիորեն նվազել է մարմնի ձախ կողմի ֆունկցիոնալ կարողությունը. փակվում է ձախ աչքը, կան գլխացավեր, վատ է գործում ձախ ձեռքը: «Այս դրությունը սպանում է նրան», ավելացրեց դատաքննությանը: ■

Գիտնականները հեռանում են

Ռուսաստանի Գերագույն խորհրդի գիտության եւ ժողովրդական կրթության կոմիտեի նախագահ Վլադիմիր Շորինի խոսքերով, Նովոսիբիրսկի ակադեմիկոսների ավանի յուրաքանչյուր երրորդ գիտնականը արտասահմանում աշխատելու հրավեր է ստացել: 200 մասնագետ արդեն մեկնել են արտասահման: ■

Ո՞ւր էր 85 թվականին

Մոսկվացի էքսրասենս Ալեքսանդր Մոլոդցովը երեք սեանսում հանում է քաղաքական սրեսները: Մեկժամյա սեանսն արժե 200 ռուբլի: 3 հազար ռուբլով բուժարարը խոստանում է ընդմիշտ անտարբեր դարձնել ցանկացած քաղաքական անհաջողության նկատմամբ: ■

Գրաքննություն Մոլդովայում

Մոլդովայի կառավարության կարգադրությամբ, արտակարգ իրավիճակի ժամանակ Մոլդովայում հրատարակվող բոլոր հրատարակություններն անցնում են արտակարգ կոմիտեների վերահսկողության տակ եւ պարտավոր են հրապարակել այդ կոմիտեների բոլոր պաշտոնական փաստաթղթերը: Թերթերի փորձնումները պետք է ներկայացվեն հանրապետության պետական գրասենյակ: ■

Բուրը քաղցկեղազերծ

Ամենամյա բժշկական քննության ընթացքում բժիշկները Ս. Նահանգների նախագահ Ջ. Բուշի դեմքից հեռացրին պոտենցիալ նախաքաղցկեղային մակերես 4 կետերներ, սակայն պնդելով, թե նախագահը առողջական լավ վիճակում է: Բուշի բժիշկ Բ. Լին ավելացրեց, որ 1990 թվականին Բուշի մի այտում հայտնաբերված գլաուկոման սխալ էր: ■

Լուսերը interfax-ի, «Մոսկ-ի եւ մեր սեփ. թղթակիցների

Հայկական ֆիլմը Սան-Ռեմոյում

Մեր թղթակիցը հաղորդում է Իտալիայից

Մարտի 30-ին Սան-Ռեմոյի հեղինակային ֆիլմերի 35-րդ փառատոնի գլխավոր տնօրեն տրն. Նինո Զուկելլին հայտարարեց մրցանակաբաշխության արդյունքները. լավագույն դերասանուհի՝ Ofelia Median, կանադական «Diplomatic Immunity» ֆիլմում կատարած դերի համար, լավագույն դերասան՝ Gisli Halidorsson, իսլանդական «The Children of Nature» ֆիլմում կատարած դերի համար, լավագույն դերասը՝ David Voda-ին՝ ամերիկյան «The Secretary» ֆիլմի բեմադրման համար: Ժյուրիի հատուկ մրցանակը՝ Վալերի Պրիեմիհովին, ռուսական «**Мигранты**» ֆիլմի համար: Մեծ մրցանակը՝ Janis Streics-ին լատվիական «The Child of Man» ֆիլմի համար:

Փառատոնում ներկայացված միակ հայկական *«Մոլիտակ գիշեր կույր սուրհանդակի համար»* ֆիլմը, որը փառատոնին մասնակցելու իրավունք էր ստացել նախ Մոսկվայում, ապա Իտալիայում քննարկվելուց հետո, նույնպես արժանացավ ինչպես ժյուրիի, այնպես էլ հանդիսատեսների ուշադրությանը: Այդ է վկայում նաեւ այն, որ Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությանն ուղղված մի նամակում տեղեկացվում է, թե ֆիլմի հեղինակներ Էդվարդ Վիրաբյանի եւ ՐԱՖՖի Հերմոն Արաքսի ներկայացնելիք հաջորդ ֆիլմը կարող է մասնակցել Սան-Ռեմո-93 փառատոնին առանց նախնական ընտրության:

Իտալական «Il tempo», «La Stampa», «Corriere della Serra», «L'Unita», «Republica» եւ այլ թերթերն իրենց էջերում լայնորեն անդրադարձել են փառատոնին՝ մեծ ուշադրություն դարձնելով նաեւ հայկական ֆիլմի վրա: Մարտի 27-ի երեկոյան, ֆիլմի ցուցադրումից հետո, տեղի է ունեցել մամուլի ասուլիս, որի ընթացքում ֆիլմի ռեժիսորն ու գլխավոր դերակատարը պատասխանել են բազմաթիվ հարցերի: ■

Եւս մեկ սակարկություն. 10 գործարք

Երեկ Սանիսլավսկու անվան դրամատիկական թատրոնում «Պրոմեթեւս» ունիվերսալ բորսայի անցկացրած երկրորդ սակարկության արդյունքները առաջինից ավելի ցածր էին: Եթե մարտի 4-ի սակարկության ժամանակ կնքվել էր 18, ապա այժմ կնքվեց ընդամենը 10 գործարք: Իհարկե, ինչպես նշեցին սակարկության խոսնակներ Է. Թումանյանն ու Մ. Գաբրիելյանը, դա դեռ վերջնական տվյալը չէ, եւ նույնիսկ դժվար է միանգամից հաշվարկել, թե ներկայացված 1 մլրդ. 65 մլն. ռուբլու ապրանքներից որքա՞ն է վաճառվել:

Ներկա պայմաններում այդ արդյունքը կարելի է գոհացուցիչ համարել, մանավանդ, որ բորսայի ստեղծման հիմնական նպատակներից մեկը հանրապետության տնտեսության առողջացումն է: Սակայն, ինչպես նշեց «Պրոմեթեւս»ի կառավարչի տեղակալ Օլեգ Առաքելյանը, բորսայի հիմնական նպատակը Հայաստանում գործող արդյունաբերական, շինարարական եւ տրանսպորտային հիմնարկ-ձեռնարկությունների կարողությունները միավորելն է, որպեսզի *«ընդհանուր ուժերով լուծենք մեր հանրապետությանն այդքան անհրաժեշտ հումքի, շինանյութի, մեքենաների, թերթ արդյունաբերության համար այլ հումքատեսակների հայթայթումը»:*

Երկրորդ նպատակն այն է, որ *«բորսայի հիմնադիր ընկերությունը մեծ ծավալի շինարարական աշխատանքներ է տանում Ստեփանավան քաղաքում, եւ մենք պարտավորվել ենք օգնել մեր հիմնադրին:*

Երրորդ նպատակը արտաքին հարաբերություններն են: Մենք վաղ թե ուշ մտնելու ենք համաշխարհային տնտեսական համակարգի մեջ, որի փորձը չունենք, որովհետեւ տասնամյակներ շարունակ մեր տնտեսական քաղաքականությունը կենտրոնացված էր եւ այժմ պետք է աշխատենք նաեւ այդ ոլորտում»:

Ինչպես տեղեկացանք բորսայի կառավարչի տեղակալ Վահագն Մովսիսյանից, «Պրոմեթեւս»ը հիմնադրվել է 1991 թվականի հոկտեմբերին՝ «Անդրանավրգազշին» բաժնետիրական ընկերության եւ Հայաստանի արդյունաբերության նախարարության կողմից: Սկզբնական հիմնադրամը կազմել է 31 մլն. ռուբլի: Բորսայի կառավարիչն է Արտաշես Գեղամյանը *(Երեւանի նախկին քաղաքապետ)*, որն ունի 7 տեղակալներ եւ ընդհանուր թվով 32 աշխատակիցներ: Բորսան վաճառել է մոտ 120 բրոկերային տեղ: Սակարկություններին ներկայացվող տեսականու գնացուցակներում նշված գները չեն բարձրացվում, դրանք նշված են եւ սակարկության դեպքում միայն իջեցվում են: Իսկ մնացած տեղեկությունները կիմանաք, եթե մասնակցեք նոր սակարկությանը: Ի դեպ, բորսայի նշանաբանը հետեւյալն է. «Ձեր հաջողությունը մեր նպատակն է, պարտնյոր»:

Հ. Ա.

Կորել է

Թամար Կարապետի Բարսեղյանի կաշվե սեւ դրամապանակը, որի մեջ եղել է 40 դոլլար, 700 ռուբլի, 6 լուսանկար, ուսանողական տոմս, ինչպես նաեւ հեռախոսի 2 տետր: Խնդրվում է վերադարձնել գոնե հեռախոսի 2 տետրը, զանգահարելով 62-22-10 համարով կամ «Ազգ»ի խմբագրության միջոցով:

Նահիրիցիները բողոքում են, տնօրենը՝ դեմ տալիս մեռած օրենքը

Ինչպես տեղեկացանք ֆլորոպրենի արտադրության բանվորներից, «Նահիրիցի» գիտարտադրական միավորումում ապրիլի 1-ից սպասվում է նոր նախագծային գործադուլ: Պահանջը մեկն է աշխատավարձի բարձրացում: Այսօր ֆլորոպրենի արտադրության բանվորները ստանում են 3000 ռուբլի աշխատավարձ, պահումներով՝ 2500: Միավորման տնօրենն ասում է, թե կան մինչեւ 4000 ռուբլի աշխատավարձ ստացող բանվորներ:

«Մարտի 27-ին միավորման տնօրենին ենք ներկայացրել մեր պահանջագիրը. աշխատավարձի բարձրացում, նվազագույնը՝ 15000 ռուբլի: Հաշվի առեք նաեւ, որ այդ 15 հազարից դեռ պիտի պահումներ արվեն, զույգի ժամանակ ասում են ֆլորոպրենի արտադրության բանվորները: Տնօրենը մեզ միանշանակ պատասխանեց. «Ձեզ աշխատում, աշխատանքից ազատման դիմում գրեք: Նոր մարդիկ կբերենք»: Այսօր աշխատելով այս թունավոր արտադրությունում, յուրաքանչյուր 10 բանվորին գոնե մեկ շիշ մածուն չի հասնում: Ասում են, թե սնունդը ծաշարանում անվճար է, սակայն արդեն մեկուկես տարի է ծաշարանում վարսակ են տալիս: Անպայման գործադուլ ենք անելու, եթե մեր պահանջները չբավարարեն... հետո կերեւա»: «Միավորումն ընդամենը 30-40 տոկոսով է կատարում իր պլանը, բացատրում է արտադրության արտադրամասի պետ Դավիթ Հովհաննիսյանը: Բանվորների պահանջը հասկանալի է. ծանր պայմաններում են աշխատում: Սակայն իրենց էլ է բացատրվել, որ այսօր անհնար է այդ պահանջները բավարարել»: Միավորման տնօրեն պրն. Հարությունյանը կտրուկ է. «Միավորման ղեկավարությունից կազմված հանձնաժողովը նայել է բանվորների պահանջագիրը եւ կազմել արձանագրություն: Ես կարծում եմ, որ անհիմն է գործադուլը: Եթե այն լինի, ապա վեճը կորոշի դատարանը: Ընդ որում, նախագահի՝ արտակարգ տնտեսական իրավիճակի մասին հրամանագրի համաձայն, գործադուլավորներին կարելի է մեկ առ մեկ հրամանով ազատել աշխատանքից: Բանվորները մոռացել են, որ առաջ ստանում էին 300 ռուբլի, իսկ այսօր՝ 3000: Կարծում եմ, այն բավականին գումար է»:

- Տեղեկացա, որ եթե ֆլորոպրենի արտադրության մարող բրիգադը չաշխատի, ամբողջ արտադրությունը կկանգնի:

- Նրանք չեն աշխատի՝ ուրիշ բրիգադ կնշանակենք, կաշխատեն: Ես 99 տոկոսով համոզված եմ, որ եթե անգամ որոշ բրիգադներ գործադուլ անեն, դրանից արտադրության ոիթմը չի խախտվի, իսկ մենք այդ դեպքում կգործենք ԽՍՀՄ «Աշխատանքային կոլեկտիվների վեճերի լուծման կարգի մասին» օրենքի համաձայն:

Սպասենք տեսնենք հանգուցյալ ԽՍՀՄ օրենքը գոնե մածուն տալո՞ւ է վերադարձված բանվորներին:

ԳԱՅԱՆԵ ԱՖՐԻԿՅԱՆ

Azg semi-weekly, 47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010
Խմբագիր՝ Ս. ԱՎԵՏԻՔԵԱՆ
Editor H. AVEDIKIAN
Macintosh համակարգչային շարուածքը Ռ.Ա.Կ. մամլոյ եւ տեղեկատուութեան կենտրոնի
ՀՀ նախարարների խորհրդին առընթեր «Պարբերական» հրատ. տպարան, Արշակունեաց 2

digitised by A.R.A.R.@